# Քրիստոնյա Հայաստան

2010, ՀՈՒՆՎԱՐ Բ, ԹԻՎ 2 (310)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


**ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

## Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի մրցանակը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին



Հունվարի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի «Ուղղափառ ժողովուրդների միասնության ամրապնդման գործում հատկանշական գործունեության, հասարակության կյանքում քրիստոնեական





արժեքների հաստատման եւ ամրապնդման համար» Ալեքսի Բ Պատրիարքի անվան 2009 թ. մրցանակի տվչության արարողությանը: Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի մրցանակը շնորհվում է պետությունների, կառավարությունների եւ խորհրդարանների ղեկավարների, եկեղեցիների հովվապետերի, հասարակական խոշոր գործիչների՝ ուղղափառ հանրության կյանքում քրիստոնեական բարոյագիտության բարձր արժեքների հաստատման, արեւելյան քրիստոնեության միջավայրում պատմականորեն ձեւավորված պետությունների տնտեսական եւ քաղաքական կապերի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Հունվարի 21-ին Մոսկվայի Սուրբ Ամենափրկիչ տաճարի եկեղեցական ժողովների սրահում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Նորին Սրբություն Պատրիարք Կիրիլ Ա-ն, ով նաեւ վերոհիշյալ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, Վեհափառ Հայրապետին եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւին հանձնեց հեղինակավոր այդ մրցանակը: Կիրիլ Պատրիարքի եւ հիմնադրամի նախագահ Վ. Ալեքսեեւի կողմից մրցանակներ շնորհվեցին նաեւ կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցային (Սերբիա) եւ Ս. Վլադիմիրի ուղղափառ հոգեւոր ճեմարանին (ԱՄՆ):

Պարգեւների հանձնման հանդիսավոր արարողության ընթացքում ներկաներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Շնորհակալություն հայտնելով՝ Նորին Սրբությունն իրեն շնորհած մրցանակը նկատեց իբրեւ վկայություն հավատակից երկու ժողովուրդների, եկեղեցիների ու պետությունների բարեկամական հարաբերությունների:

*«Աստծո կամքով օրհնվել է Քրիստոսի հանդեպ սիրո վեմին հաստատված եղբայրությունը մեր եկեղեցիների, օրհնվել է մեր ժողովուրդների բարեկամությունը: Հայ-ռուսական դարավոր բարեկամությունը կռվել ու թրծվել է մեր ժողովուրդների կողք կողքի պայքարով, կողք կողքի արարումով: Այն վկայված է հոգեւոր, մշակութային, քաղաքական, տնտեսական հաստատուն ու ամուր կապերով, մտավոր ու գիտական ձեռքբերումներով, անշրջելի ու հարաճուն գործակցությամբ եւ ներթափանցել ընտանեկան հարկերից ներս: Չիրավի, աշխարհագրական հեռավորությունը խոչընդոտ չեղավ եւ խոչընդոտ չէ մեր երկրների դաշնակցության»*,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հովվապետը կարեւոր նկատեց ջանքերի մեկտեղումը՝ հանուն մեր երկրների զորացման, կյանքի բարօրության եւ երջանկության, ժողովուրդների առջեւ ծառացող խնդիրների հաղթահարման: Խոսելով հոգեւոր կյանքի վերածնության կարեւորության մասին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ առ Աստված հավատքի, հոգեւոր-բարոյական արժեքների զորությամբ է, որ մարդկային հոգում անշրջելի պիտի լինի ընդհանուր բարիքի ձգտումը:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Բարձրյալի սերը եւ հանապազ առաջնորդությունը ուղեկից լինեն մեր ժողովուրդներին, մեր երկրների պետական այրերին, մեր եկեղեցիների ուխտապահ հոգեւոր դասին, որպեսզի մեր կյանքով ու գործերով Աստված փառաբանվի, եւ շենանան մեր հայրենիքները, ամուր մնա ու հարատեւի մեր բարեկամությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մրցանակի գումարը փոխանցեց Երեւանում կառուցվող ռուս ուղղափառ եկեղեցու հիմնադրամին:

Մոսկվա այցի ընթացքում Նորին Սրբությունը Կրեմլի Ս. Աստվածածնի վերափոխման տաճարում ներկա գտնվեց նաեւ Կիրիլ Պատրիարքի մատուցած սուրբ պատարագին, որի ավարտին երկու հովվապետերը հանդես եկան պաշտոնական խոսքով:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Վոլոկալամի Իլարիոն արք. Ալֆեեւի հետ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Հայոց Բանակի օրվա առիթով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր հաղթական Բանակի զինվորներին եւ զորահրամանատարներին:*

*Հայոց Բանակի ծննդյան հետ կապված են մեր նորօրյա պատմության պանծալի հիշատակները, մեր ժողովրդի հավատավոր, հայրենասեր ու ազատասեր, արի հոգու հաղթանակները, որոնք պարծանքով են լցնում այս տոնական օրը եւ ոգեշնչում ու զորացնում մեզ: Արդարեւ, Արցախյան ազատամարտի եւ Հայաստանի սահմանների պաշտպանության հերոսական մարտերում կազմավորված եւ հասակ առած Հայոց Բանակը հավատարիմ զավակն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Այսօր մեր Բանակի քաջարի զինվորների եւ հրամանատարների պատասխանատու ու նվիրյալ ծառայությամբ խաղաղ են մեր Հայրենիքի սահմանները, եւ մեր ժողովուրդն իր ազատ կյանքն է կառուցում Հայաստանում եւ Արցախում:*

*Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահպանի մեր Հայրենիքը եւ Իր օրհնության ու շնորհների ներքո հավատքով ամուր, Հայրենիքի սիրով զորացյալ պահի Հայոց Բանակը զորաց եւ զորականաց՝ պարգեւելով բաջառողջություն, երկար օրեր, նոր ձեռքբերումներ, փառք ու պատիվ Հայրենիքի ծառայության մեջ:*

## Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Սերբ Ուղղափառ եկեղեցու նորընտիր գահակալին



Հունվարի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Պեչսկի արքեպիսկոպոս, Բելգրադի եւ Կարլովցի մետրոպոլիտ Նիշի եպս Իրինեոսին՝ Սերբ Ուղղափառ եկեղեցու պատրիարք ընտրվելու եւ գահակալության առիթով:

*«Սուրբ Հոգու ներշնչմամբ եւ ի նշան Սերբ Ուղղափառ եկեղեցում Ձեր օրինակելի հոգեւոր առաջնորդության, Դուք ընտրվեցիք որպես Սերբիայի եկեղեցու առաջին սպասավոր եւ կոչվեցիք առաջնորդելու մի ժողովրդի, որի պատմությունը հատկանշված է անսասան հավատարմությամբ առ Քրիստոս եւ բազում մարտիրոսներով»*,- ասվում է հայրապետական շնորհավորագրի մեջ:

Նորին Սրբությունը վստահություն է հայտնել, որ միայն ջանքերի մեկտեղումով հնարավոր կլինի հաղթահարել ժողովուրդների առջեւ ծառացած դժվարությունները եւ մարտահրավերները: Հայոց Հայրապետը կարեւորել է նաեւ միջեկեղեցական կապերի սերտացումն ու միջկրոնական երկխոսության առավել խթանումը:

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Տյառնընդառաջի տոնը նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն եւ անվանվում է «Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն»:

Երբ Հիսուսը ծնվեց, Նրան, ընդունված կարգի համաձայն, տարան Երուսաղեմի տաճար, քանի որ ըստ Մովսիսական օրենքի՝ «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի եւ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ» (Ղուկաս Բ 23-24, տե՛ս եւ Ղեւտացոց ԺԲ 8):

Տաճար բերված Հիսուսին ընդառաջ են ելնում Սիմեոն ծերունին եւ Աննա մարգարեուհին: Սիմեոն ծերունին արդար ու աստվածավախ մարդ էր, եւ Սուրբ Հոգուց նրան հրամայված էր այնքան ապրել, մինչեւ տեսնի Տիրոջ Օծյալին: Եվ երբ ծնողները Հիսուսին տաճար են բերում, Սիմեոնը գնում է Մանկանն ընդառաջ, գրկում, օրհնում Աստծուն եւ ասում. «Այժմ, ո՛վ Տէր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք Իսրայելի Քո ժողովրդի համար»:

Նույն ձեւով իր գոհությունն է մատուցում նաեւ տաճարում գտնվող Աննա մարգարեուհին:

Տյառնընդառաջի պատկերներում ավետարանական պատմության հետեւողությամբ ընծայումը տեղի է ունենում Երուսաղեմի տաճարը խորհրդանշող կառույցի ներքո: Պատկերի կենտրոնում ցիբորիումն է (հովանոցաձեւ ծածկ), որի ներքո սուրբ խորանն է: Ինչպես որ ծննդյան մանրանկարներում մսուրը նաեւ ապագա զոհասեղանն էր խորհրդանշում, իսկ խանձարուրը՝ պատանքը, այնպես էլ այստեղ խորանի սեղանը, որպես զոհասեղան, խորհրդանշում է այս ընծայումից հետո սպասվելիք զոհաբերությունը՝ խաչելությունը:

Խորանի սեղանի երկու կողմերում համապատասխանաբար Մարիամն ու Հովսեփը եւ Սիմեոն ծերունին ու Աննա մարգարեուհին են: Մանուկ Հիսուսը պատկերվում է Մարիամի կամ Սիմեոն ծերունու գրկում եւ կամ էլ ձեռքից ձեռք է փոխանցվում:

Սիմեոն ծերունին մանրանկարներում պատկերվում է սպիտակամորուս, մեկ ձեռքով Հիսուսին գրկած, իսկ մյուսով՝ մի գալարափաթեթ բռնած:

Սիմեոնի փոխարեն ձեռքին նման մի գալարափաթեթ բռնած է ներկայացվում Աննա մարգարեուհին: Այս հանգամանքը պայմանավորված է թե՛ Սուրբ Գրքի՝ հինկտակարանյան եբրայական ձեռագրային ավանդույթով եւ թե՛ Սիմեոն ծերունու մասին պատմվող եկեղեցական ավանդությամբ:

Հին Կտակարանի գրքերից յուրաքանչյուրը հրեաները գրում էին առանձին գալարափաթեթների վրա: Միջնադարյան պատկերագրությունում այս գալարափաթեթները խորհրդանշում էին Հին Ուխտի տարբեր գրքերը, որի համար էլ Հիսուսի կյանքի տարբեր դրվագները ներկայացնելիս նկարի մի անկյունում հաճախ պատկերվում էր հիշյալ դրվագն ակնարկող մարգարեական կանխասացությունը՝ այն ասած մարգարեի ձեռքում բացված գալարափաթեթի վրա գրված մարգարեական բնորոշ տողով, ինչպես օրինակ՝ ավետման մի շարք մանրանկարներում եւ կտավներում նկարի անկյուններում եւ ստորին մասում Հիսուսի ծննդյան համար մարգարեացած մարգարեներն են եւ նրանց ու հատկապես Եսայու «Ահա կույսն կհղիանա եւ կծնի որդի» (Եսայի Է 14) խոսքերը՝ գրված ձեռքերին պահած գալարափաթեթին:

Տյառնընդառաջի մանրանկարներում եւս Աննա մարգարեուհու ձեռքի գալարափաթեթին հաճախ տարբեր մարգարեական կանխասացություններ եւ բնորոշումներ են լինում, ինչպես օրինակ՝ 11-րդ դարում գրված Մուղնիի Ավետարանում Աննա մարգարեուհու ձեռքի գալարափաթեթին երկաթագիր դրոշմված է. «Այս տղայ է Արարիչ երկնի եւ երկրի»:

Սիմեոն ծերունին պատկերվում է առանձնակի ալեհեր, սպիտակամորուս ու ծերացյալ տեսքով, որը պայմանավորված է եկեղեցական հետեւյալ ավանդությամբ: Ասվում է, որ Սիմեոնը մեկն էր այն յոթանասուներկու թարգմանիչներից, որոնց ի մի էր հավաքել Եգիպտոսի Պտղոմեոս թագավորը մի կղզում, որպեսզի նրանք եբրայերենից հունարենի թարգմանեին Հին Կտակարանը: Ասվում է, որ Հին Կտակարանի գրքերից յուրաքանչյուրի թարգմանությունը հանձնարարված էր երկուական թարգմանիչների, որոնք առանձին էին մնում եւ թարգմանության ընթացքում միմյանց չէին տեսնում, ապա Պտղոմեոսի ներկայությամբ համեմատվում էին նրանց միմյանցից անկախաբար կատարած թարգմանությունները:

Սիմեոնին հանձնարարված էր թարգմանել Եսայու մարգարեությունը, որը թարգմանելով, երբ հասնում է «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի» (Է 14) տողին, այն գրելուց հետո մտածում է, որ հեթանոսները կարդալով չեն հասկանա, ուստի ջնջում է այդ խոսքերը: Այնուհետեւ այն մտավախությունն ունենալով, որ այդ դեպքում էլ իր թարգմանությունը կտարբերվի իրեն զուգահեռ թարգմանող մյուս թարգմանչի թարգմանությունից, նորից վերականգնում է, քնելուց առաջ, սակայն, ջնջում է եւ տրտմած անկողին մտնում: Առավոտյան արթնանալով՝ տեսնում է, որ ջնջված տողը մագաղաթի վրա դրոշմված է ոսկեգիր եւ հիացած երանի է տալիս նրան, ով կտեսնի «զՄանուկն կուսածին»: Այդժամ Սուրբ Հոգին նրան ասում է, թե մահ չես տեսնի, մինչեւ չտեսնես «զՏղայն կուսածին, որ է օծեալ Տեառն»: Սիմեոնն այդ ժամանակ երիտասարդ էր եւ 344 տարի անց գալիս է օրը, երբ Հովսեփն ու Մարիամը տաճար են բերում Մանկանը: Այդժամ Սուրբ Հոգուց Սիմեոնին ասվում է. «Արի՛, ծե՛ր, եկ ի տաճարն եւ առ ընկալ, զոր հայցէիր, ահա կոյսն եւ Որդի իւր»: Ասվում է, որ Մանկանը գրկելուց հետո ծերունին խաղաղված սրտով ու հոգով վախճանվում է հենց տաճարում:

Մանկանը գրկելուց ծերունու ապրած ցնծությունը մանրանկարիչները վարպետորեն պատկերում են մարմնի դիրքով պայմանավորված ներքին ռիթմով եւ գունային խաղով: Այդ ցնծությունը պայմանավորված էր մարդկության Փրկչին գրկելով, որով եւ վերջ գտավ ծերունու տեւական սպասումը, ինչպես որ Ղուկասի Ավետարանում է գրված, թե Սիմեոնը, փառք տալով Աստծուն, ասում է. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ»:

*Շարունակությունը՝ էջ 3*

## Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ

## Ասված Քրիստոսի Ծննդյանը

*Սկիզբը՝ 2009 թ. թիվ 23- 24, 2010 թ. թիվ 1*

Լրացան Եղիսաբեթի օրերը՝ ծնելու ճշմարտության քարոզչին: Նա եկավ ընկավ Մարիամի առջեւ, աղաչեց նրան ու ասաց. «Եկար ողջույնով, գնա՛ խաղաղությամբ, մե՛ծ Թագավորի մայր, քանզի պատշաճ չէ, որ Արքան ծառայի ծառային: Լավ չէ, որ ծառան բազմի, իսկ նրա Տերը կանգնի նրա առջեւ, եւ անհնարին է, որ կրակը ծառայի հարդին: Վե՛ր կաց, վերցրո՛ւ արդարության Արեգակիդ եւ գնա՛, քանզի եթե փոքրիկ ճրագս տեսնի Նրան, կաղոտանա Նա լույսից»:

Թագավորը դարձավ ծառայի տնից եւ եկավ Իր մոր տուն:

Եվ Կույսը, ով կրում էր բազմօրյա Մանկանը, եկավ Հովսեփի մոտ: Արդար Հովսեփը տեսավ նրան եւ հույժ զարմացավ: Նայում էր նրա հեզությանն ու ամոթխածությանը եւ մեծապես զարմանում, որ նա հղի է: Գիտեր, որ սուրբ է հոգով եւ մաքուր է սրտով, եւ չգիտեր՝ ինչ անի, քանզի Մանուկը խաղում էր նրա որովայնում: Պայծառ էր տեսքով եւ պարկեշտ կերպարանքով, բայց որովհետեւ կրում էր Մանկանը, արդարը չէր հանդարտվում: Տեսնում էր նրա առաքինի ու հրաշալի վարքը եւ զարհուրում, նայում էր նրա հղիությանն ու խռովվում: Որքան Հովսեփը երկայնամիտ էր լինում եւ անտեսում, որովայնն ինքնին աղաղակում էր Մանկան մասին: Եվ որքան նա կամենում էր պահել իր խորհուրդները, որպեսզի չհանդիմանի, տեսնում էր ուրիշներին, որոնք ակնարկ էին անում իրար: Եվ որքան խորհում էր չհանդիմանել սրբուհուն, տեսնում էր շատերին, որ մատնացույց էին անում նրան: Նեղվում էր Հովսեփը Մարիամի հղիության պատճառով. սրբությունից երկնչում էր խոսել, իսկ լռել չէր համբերում: Հեզությամբ եկավ եւ սկսեց խոնարհությամբ ասել.

«Ասա՛ ինձ, Տալիթա՛, անգիտությամբ ի՞նչ պատուհասի հանդիպեցիր:

Երեւելի՛ նավ, ո՞ւր ընկղմվեցիր արագ ընթացքիդ ժամանակ, եւ կամ ո՞ր ծովը խորասույզ արեց քո թանկարժեք գնումը:

Անբի՛ծ աղավնի, ո՞վ կտրեց քո գեղեցիկ թեւերը, ո՞վ հանեց քո երիտասարդության ծաղկագույն փետուրը: Հեզ ու հանդա՛րտ ծով, ո՞վ գողացավ քո մարգարիտները, ո՞ր ավազակը հափշտակեց քո մատանու կնիքը: Ամո՛ւր քաղաք, ո՞վ կործանեց քո պարիսպներն ու գերեվարեց ավարդ: Բարի՛ հող, ո՞վ սերմանեց քո մեջ նենգության սերմը, քանզի այդ խուրձդ մերից չէ»:

Մարիամը պատասխան տվեց ու ասաց. «Բավական է, Հովսե՛փ, մի՛ շարունակիր: Իմ Տերը վկա է, որ սխալ չեմ գործել: Իմ մեջ պահված է մարգարիտը եւ գողացված չէ, կնքված են մատանիները, եւ ոչ ոք չի քանդել այն: Ոչ ոք չառավ պայծառ մարգարիտը, որ քեզ համար էր խոսված: Պատվական քարը, որ քեզ էր ավանդված, կոտրված չէ: Իմ մեջ հաստատուն է իմ կուսության պսակը, եւ մեծագին զարդը կողոպտված չէ»:

Հովսեփն ասաց. «Մինչ այժմ ճշմարիտ էիր, եւ քո սրբության մասին բոլոր մարդկանցից առավել ես էի վկայում եւ ամեն ժամ ուրախանում էի քո արդարությամբ, եւ որ ստախոս չէիր, հաստատապես գիտեի: Բայց այժմ անհնարին է, որ ես հավատամ քո խոսքերին, քանի որ խոսքերից առավել գործերն են արժանահավատ: Ինչպե՞ս ընկալեմ քո առասպել խոսքերը, քանզի հաստատապես քո մեջ մանուկ եմ տեսնում: Պոռնկությանը մշտապես կցորդվում է սուտը, եւ խաբեությունը լծակից է գողությանը: Շնացողը, եթե անգամ երդվում է, սուտ է, քանզի մեկ չարիքը կարող է բազում չարիքներ ծնել: Քո խոսքե՞րը լսեմ, թե՞ հաստատ կատարած գործիդ հավատամ»:

Կույսը պատասխանեց ու ասաց. «Իմ խոսքերի [ճշմարտացիությունը] կուսությունս կվկայի, եւ այն, որ հղիացել եմ, ո՛չ ինձնից է եւ ո՛չ քեզնից: Եվ որ տղամարդու չեմ մերձեցել, ճշմարիտ է, հավատա՛ ինձ՝ ամուսնություն երբեք չեմ տեսել: Եթե ինձ չես հավատում, մեր ազգի մեջ իմաստուն կանայք կան. մի՞թե միայն ես ունեմ կուսության կնիք կանանց ազգի մեջ:

Եվ դարձյալ՝ տո՛ւր ինձ՝ խմելու փորձության ջուրը՝ ըստ Մովսեսի օրենքի: Ուրիշ ի՞նչ հավատարիմ վկա բերեմ քեզ, քան կուսությունն ու փորձության ջուրը: Իսկ եթե ե՛ւ ինձ, ե՛ւ նրանց սուտ ես համարում, իմ Որդին, որ Բարձրյալի զորությունն է, կվկայի, որ տղամարդ չեմ ճանաչում»:

Հովսեփն ասաց. «Ո՞վ կարող է հավատալ այդպիսի խոսքերի, քանզի ուրիշ նման օրինակ չկա: Ո՞վ է տեսել կուսությունն ու մանուկը մեկ որովայնում, եւ կամ ո՞վ է լսել լցված ստինքներն ու մատանիների կնիքը մեկ մարմնում: Կանանց մեջ երբեք չի եղել այդպիսի բան, որ կույսը հղիանա առանց տղամարդու: Ինձ համար դժվարին է հավատալ նոր ու օտար գործիդ, որին ո՛չ բնությունն է վկայում, եւ ո՛չ էլ՝ Գրքերը»:

Մարիամն ասաց. «Եթե իմ խոսքերին վկա ես փնտրում, դյուրությամբ կուսանես ե՛ւ Գրքերից, եւ բնությունից: Ո՞վ ամուսնացավ կույս հողի հետ, որ ծնեց Ադամին, եւ ինքը՝ Ադամը ո՞ր մերձավորությամբ ծնեց Եվային: Ո՞վ ամուսնացավ ծառի հետ, որ ծնեց խոյին, եւ կամ ո՞վ մերձեցավ վեմին, որ վտակներ բխեցրեց: Ո՞ր հողը հղացրեց գավազանին տապանակի մեջ, եւ կամ ո՞ր զորությունից ջուր բխեց էշի ծնոտից: Ո՞վ այսքան որովայններում այսպիսի զավակներ սերմանեց, որ դու միայն իմն ես անհնարին համարում: Եվ եթե չես հավատում բնությանը, լսի՛ր Սուրբ Գրքերին ու հոգեշունչ մարգարեներին: Չե՞ս կարդացել, թե ինչ է ասում Եսային. «Ահա կույսը կհղիանա եւ կծնի Էմմանուելին» (Ես. Է 14): Այս մարգարեն քեզ ճշմարի՞տ է թվում, թե՞ սուտ, հավատո՞ւմ ես արդյոք, թե՞ սրտիդ մեջ կասկած կա»:

Հովսեփն ասում է. «Երկուսից էլ վախենում եմ, եւ հարկ է, որ ես ստուգապես փախչեմ քեզնից: Քանզի եթե քո մանուկը ամուսնությունից է, քա՛վ լիցի ինձ՝ իմ սրբությունը միավորել այն անձին, որ ուրիշին մերձեցավ, իսկ եթե Սուրբ Հոգուց է, նույնպես արժանի չեմ



բնակվելու քեզ հետ: Այլեւս չեմ քննի, թե ով է կամ որտեղից է»:

Այս ասաց Հովսեփը եւ լռեց, որովհետեւ խորհում էր արձակելու Մարիամին:

Իսկ Մարիամը շատ վշտացավ նրա տրտմության համար, մայրաբար աղաչեց իր Որդուն եւ աղոթեց Նրան՝ իբրեւ Աստծու, հառաչեց՝ իբրեւ աղախին, ծնաղաբար խնդրեց Նրանից, ծածկապես հայցեց Նրանից, սիրով խոսեց Նրա հետ, իր մտքում իմաստությամբ խորհեց, քանզի մեծապես հուսացել էր իր Որդուն: «Ո՛վ ճշմարիտ Որդի իմ եւ Հոր Բան, Ում համար բազում զրպարտություններ կրեցի, ծագեցրո՛ւ Քո լույսը եւ լուսավորի՛ր Հովսեփի մտքի խավարը: Քանզի նա երկրավոր կարծիքով հայր անվանվեց Քեզ, հայտնի՛ր նրան Քո մոր ճշմարտությունը: Գթա՛, Ողորմա՛ծ, արդարին ու անբիծին եւ մի՛ հեռացրու նրան Քո աստվածային հայտնությունից, մի՛ թաքցրու նրանից Քո խորհուրդը, որպեսզի չկորչի, այլ հայտնի՛ր նրան Քո հայտնության մասին եւ ուրախացրո՛ւ նրան, որպեսզի մոռանա իր տրտմությունը:

*Շարունակությունը՝ էջ 4*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ ԺԲ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ

## (1576-1590)

*Սկիզբը՝ թիվ 1*

Պատերազմական գործերից անցնենք հայկական ներքին խնդիրներին: Սուլթանշահ Եվդոկացին, որ մնացել էր Հռոմում, ստանալով Մարգանտոն կամ Մարկոս Անտոնիոս անունը, դարձել էր հյուրանոցի տեսուչ: Նա հյուրընկալում էր փախստական, պանդուխտ եւ ուխտավոր հայերին, որի մասին անձամբ մեծ գովեստով է խոսում: 20 տարի բնակվելով Հռոմում եւ համոզված լինելով իր թագավորական ծագմանը՝ ձգտում էր իշխանական տիտղոս ձեռք բերել: Դրա համար պետք էր կալվածք ունենալ: Այդ կապակցությամբ գրում է, թե Հռոմի պապը կամեցել է իրեն ժառանգություն տալ քաղաքներ կամ բերդեր: Սա ոչ այնքան պապի միտքն էր, որքան իրենը, ինչպես ճիշտ եզրակացնում է Մ. Օրմանյանը: Ճիշտ է, Պիոս Ե-ին հաջորդել էր Գրիգոր ԺԳ պապը, որն աշխատում էր իր կողմը գրավել արեւելցիներին եւ մասնավորապես հայերին՝ տրամադրելու նրանց ընդունելու հռոմեադավանությունը: Ըստ երեւույթին, Միքայել կաթողիկոսից Աբգարին տրված վկայագիրը բավարար ազդեցություն չէր ունեցել, որ Սուլթանշահից նոր վկայագիր պահանջեցին՝ թագավորական ծագման մասին ճշտված ազգաբանությամբ: Սուլթանշահին ստիպված եղավ դիմել Թադեոս կաթողիկոսին: Այդ նամակը պահպանվել է Անտոնյանց արխիվում: Նամակը գրվել է 1583 թվի հոկտեմբերի 21-ին՝ շաբաթ օրը: Սակայն Մ. Օրմանյանն իրավացիորեն ցույց է տալիս, որ դա պետք է եղած լիներ երկուշաբթի օրը, քանի որ 1581 թվի հոկտեմբերի 21-ն է շաբաթ: Պարզ է, որ ուղղակի Թադեոսին գրելը պայմանավորված էր վերջինիս Իտալիա գալով: Հնարավոր է, որ նրանք անգամ տեսակցել են Վենետիկում: Թադեոսը նրան վկայագիր է տալիս՝ կնքված իր եւ 20 եպիսկոպոսի կողմից: Սա Սուլթանշահն անում էր կալվածքներ ստանալու ակնկալիքով: Ըստ որում, նշվում է, որ դա արվել է ոչ թե Սուլթանշահի ցանկությամբ, այլ ի շահ Հայաստանի, միաժամանակ՝ Հռոմում հայերին հովանավորություն ցույց տալու համար: Որ իր նպատակն է Հայաստանի փրկությունը կազմակերպել, այլ խոսքով՝ Աբգարի ծրագիրն իրագործել: Սակայն մեզ ոչինչ հայտնի չէ այս գործի հետեւանքների մասին: Ավելի հավանական է, որ ոչ մի ազդեցություն էլ չի ունեցել: Առավել եւս, որ նրա հետագա գործունեության եւ վախճանի մասին որոշակի տեղեկություններ չկան:



Գրիգոր ԺԳ պապը պատմության մեջ մտել է որպես նոր տոմարի ընդունող: Արեւմուտքում այն ընդհանրապես ընդունված էր, սակայն Արեւելքում այդ տեղի ունեցավ շատ դեպքերում նորագույն ժամանակներում: Տոմարի վերջին ճշտումը եղել է 325-ին Նիկիայի ժողովում: Նպատակը զատկական հաշիվը ճշտելն էր: Դրա համար հիմք էր ընդունված Հուլյան կացությունը՝ տարին բաղկացած 365 օրից եւ 6 ժամից: Յուրաքանչյուր չորրորդ տարին համարվում էր նահանջ, որի օրերի թիվը 366 էր: Ըստ այդմ, դարն ունենում էր 36525 օր: Զատկի օրը ճշտելու համար մարտի 21-ն ընդունվում էր հաստատուն գիշերահավասար, ինչպես 325 թվին էր, եւ ըստ այդմ էլ կազմվեցին զատկական ցուցակները: Իրականությունն այն էր, որ տարին 365 օր եւ 6 ժամ չէ, այլ 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 47 վայրկյան եւ 33 երկվայրկյան, եւ տարբերությունն ամեն տարի կազմում է ավելի քան 11 րոպե: Իսկ այդ տարբերությունը մեկ դարի ընթացքում կազմում է շուրջ 1 կամ, տասնորդական հաշվարկով, 0,7783 օր: Հասկանալի է, որ այդ տարբերության հետեւանքով դարերի ընթացքում գիշերահավասարը խախտվել էր եւ չէր համապատասխանում մարտի 21-ին: Մի դար առաջ անդրադարձել էին դրան, սակայն խնդիրը մնացել էր անորոշ: Այն նորից բարձրացրեց իտալացի աստղագետ Ալոիսիո Լիլիոն: Նա լուրջ քննություն էր կատարել այդ բնագավառում, սակայն 1576-ին մահացավ, եւ նրա գործը մնաց անավարտ: Գրիգոր ԺԳ պապն այդ գործը հանձնարարեց ուրիշ գիտնական այրերի, որոնք ցույց տվեցին, որ գիշերահավասարը 10 օրով խախտվել է, եւ իրականում մարտի 11-ն է գիշերահավասարի օրը: Այդ 10 օրերի խնդիրը լուծվեց պապի հրամանով՝ 1582-ին, եւ հոկտեմբերի 4-ին միանգամից հաջորդեց հոկտեմբերի 15-ը, որն ուրբաթ էր՝ ի տարբերություն հոկտեմբերի 4-ի, որը հինգշաբթի էր: Որպեսզի հետագայում նման խնդիրներ չծագեն, որոշվեց յուրաքանչյուր դարավերջի տարին համարել նահանջ, չորրորդ դարավերջ համարվեցին այն թվականները, որոնց հարյուրամյակները բաժանվում էին չորսի: 1582 նոր կամ Գրիգորյան տոմարն ընդունեցին Իտալիան, Իսպանիան, Լուզիտանիան, Ֆրանսիան, Բելգիան եւ Դանիան, 1583-ին՝ Շվեյցարիայի հռոմեադավանները, 1584-ին՝ Գերմանիայի կաթոլիկները, 1596-ին՝ Լեհաստանը, եւ 1597-ին՝ Հունգարիան: Շվեյցարիայի եւ Գերմանիայի բողոքականներն այն ընդունեցին միայն 1700-ին, իսկ Անգլիան, Շվեդիան եւ Նորվեգիան՝ 1792-ին: Եվրոպական պետությունների գաղութներն այն ընդունեցին իրենց մետրապոլիայի հետ միաժամանակ: Արեւելյան ազգերը եւ եկեղեցիները շարունակում էին հետեւել Հուլյան տոմարին՝ մինչեւ նորագույն ժամանակները: Հին եւ նոր տոմարների միջեւ տարբերությունը գնալով աճում էր եւ 1900-ի վերջին հասավ 13 օրվա: Նորագույն ժամանակներում Արեւելքի շատ երկրներ նույնպես անցան Գրիգորյան տոմարին:



Հռոմ եկողների մեջ էր նաեւ մի այրի քահանա՝ Հովհաննես Տերզնցի անունով: Նա իր երկու աղջիկներին թողել էր Ամիդում, հետը վերցնելով Խաչատուր անունով որդուն՝ եկել էր Հռոմ՝ բախտ որոնելու: Մտերմանում է Սուլթանշահի հետ եւ տպարան բացում: Առաջին տպած գործն էր «Գրիգորեան տոմարը», որը լույս տեսավ 1584-ին: Անտարակույս է, որ այդ ձեռնարկն իրականցավ Գրիգոր ԺԳ պապի հովանավորությամբ, քանի որ նա կամենում էր Արեւելքին եւս ծանոթացնել նոր տոմարին: Մ. Օրմանյանը շատ նուրբ նկատում է, որ Հռոմի պապը կամենում էր արեւելցիներով եւ մասնավորապես հայերով լրացնել իր կորուստներն Արեւմուտքում, որտեղ հանդես էր եկել բողոքականությունը: Այդ նպատակով նա Հռոմում հատուկ հայերի համար եկեղեցական դպրատուն բացեց իր ծախքով, որպեսզի այնտեղ պատրաստվեն հռոմեադավան հայ եկեղեցականներ: Նա կամենում էր դրանց ձեռքերով հասնել Հայոց Եկեղեցու կաթոլիկացմանը: Սակայն Գրիգոր ԺԳ պապի որոշումն արդյունք չունեցավ: Կոնդակը մեջտեղ եկավ 1584 թվի հոկտեմբերի 13-ին, իսկ ինքը 1585 թվի ապրիլի 10-ին մահացավ: Ըստ որում, նա չհասցրեց անգամ այդ գործին ձեռնարկել: Նրա հաջորդներն այդ խնդրին ուշադրություն չդարձրին, եւ միայն Ուրբանոս Ը պապը 1630-ին բոլոր ազգերի համար Պրոպագանդայի կամ Ծավալոցի դպրոցը հիմնեց:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 2*

Քանի որ Ավետարանում ասվում է, թե Սիմեոն ծերունին, իր գիրկն առնելով քառասնօրյա Հիսուսին, օրհնեց Աստծուն, այս խոսքերից ենթադրում են, թե նա Զաքարիայի նման հոգեւորական է եղել եւ տաճարի սպասավոր, որովհետեւ հոգեւորականներին է վերապահված օրհնելը: Վաղ քրիստոնեական ավանդությամբ Կյուրեղ Երուսաղեմացին եւս Սիմեոնին հոգեւորական է ներկայացնում՝ նրան Տիրոջ սպասավոր անվանելով՝ «Խոսք մեր Տիրոջ եւ Փրկչի Տաճար ընծայման եւ Սիմեոն աստվածազգյացի» ճառում: «Զգենուլ» գրաբարում նշանակում էր իրենում կրել, եւ Սիմեոնն այստեղ աստվածազգյաց է անվանվում, քանի որ կրեց, գրկեց մանուկ Հիսուսին:

Սիմեոնին հոգեւորական ու տաճարի սպասավոր համարելը միջնադարյան խորհրդաբանությամբ իր հերթին խորհրդանշում է Հին եւ Նոր Կտակարանների հանդիպումը, երբ Սիմեոնը գրկում է Մանկանը: Այս տեսարանը խորհրդանշում է եւ այն պահը, երբ եկեղեցին ընդունում է Քրիստոսին:

Նույն այս պատճառով Տյառնընդառաջի տեսարանում, որպես Հին եւ Նոր Ուխտերի խորհրդանիշ, խորանին պատկերվում են մանանայով սափորը եւ Հին Ուխտի տապանակը:

Ինչպես տեսանք, «Ղեւտացոց գրքում» պատվիրվում է, որ քառասնօրյա մանկանը տաճար բերելիս մայրը «մեկ տարեկան գառ թող ողջակեզ անի, մի զույգ աղավնի կամ տատրակ թող բերի, մեղքերի քավության համար, վկայության խորանի դուռը՝ քահանայի մոտ» (Ղեւտ. ԺԲ 8): Քրիստոնեական խորհրդաբանությամբ ասվում է, որ ինչպես Տերը մսուրում ծնվեց եւ ոչ պալատում, այնպես էլ Նրա ընծայման ժամանակ գառան փոխարեն ծնողներն աղավնի եւ տատրակ բերեցին, որովհետեւ ունեւոր չէին:

«Երգ երգոցի» նշանավոր «Ձմեռն անցավ, տատրակի ձայնը լսելի եղավ մեր երկրում» (Բ 12) տողի հետեւողությամբ Գրիգոր Տաթեւացին ասում է, որ տատրակի ձայնն ազդարարում է գարնան գալուստը, իսկ գարունը, որպես բնության հարության եղանակ, խորհրդանշում է Քրիստոսին:

Տաճար բերելիս տատրակների այս ընծայումը բացատրվում է մի շարք խորհուրդներով եւս: Նախ, որ տատրակը ողջախոհ է, ընկերոջը կորցնելիս միայնակ է շրջում, եւ նույն ողջախոհությամբ իրենց երկրային կյանքն անցկացրեցին Հիսուսը եւ Տիրամայրը:

Նույն այս պատճառով տատրակը նաեւ Եկեղեցու խորհուրդն ունի, թե ինչպես ընկերոջը կորցրած տատրակն է շրջում միայնակ եւ տրտում, այնպես էլ Փեսայից՝ Քրիստոսից, անջատ լինելով՝ Եկեղեցին է տրտմում եւ օրերը պահքով անցկացնում, մինչեւ որ հասնի երկնային Փեսային:

Նույն այս համաբանությամբ ու առավել մեծ ընդհանրացվածությամբ Տաթեւացին ասում է, որ երբ աղավնու ձագին մորթում են, աղավնին այլեւս չի հեռանում այն տեղից, ուր կաթել է իր ձագի արյունը, եւ որ համանման ձեւով Քրիստոսը հանապազ տեսնում է խաչի վրա հեղված Իր արյունը քրիստոնյաների համար եւ չի հեռանում խաչափայտից, եւ Հայր Աստված տեսնում է Իր Միածին Որդու արյունը պատարագի ժամին եւ պահպանում Սուրբ Եկեղեցին:

Ինչպես որ Տյառնընդառաջի տոնին խարույկ է վառվում, այնպես էլ մանրանկարներում պատկերվում են վառվող մոմեր: Տյառնընդառաջի վառվող կրակը եւ այս թեմայով պատկերներում վառվող մոմը պայմանավորված են Սիմեոն ծերունու հետեւյալ խոսքերով. «Լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար, եւ փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար»:

Տյառնընդառաջի պատկերները իմաստային-գեղարվեստական մի ընդհանրություն են գծում ծննդյան պատկերների մոգերի երկրպագության հետ: Մոգերին առաջնորդեց բեթղեհեմյան աստղը, իսկ Սիմեոն ծերունին տաճար եկավ՝ առաջնորդված Սուրբ Հոգուց: Երեք մոգերից Մելքոնն իր ընծան տալուց հետո խոնարհվեց եւ գրկեց Հիսուսին, ինչպես Սիմեոն ծերունին:

Մոգերի գալով՝ խռովվեց ողջ Երուսաղեմը: Ինչպես Մատթեոս ավետարանիչն է գրում. «Երբ Հերովդես արքան լսեց այս, խռովվեց, նրա հետ եւ Երուսաղեմի ամբողջ ժողովուրդը» (Մատթ. Բ 3): Համանման ձեւով, ինչպես ասվում է եկեղեցական սրբազան ավանդության մեջ, ողջ Երուսաղեմը հուզվեց, երբ Հիսուսը տաճար բերվեց, եւ այս հանդերձանքով են պայմանավորված տոնի «Քառասնօրյա ընծայումն ի տաճար» անվանմանը զուգահեռ տրվող Տյառնընդառաջ անունը եւ այս տոնին բնորոշ լույսն ու կրակը:

Տաթեւացին բացատրելով, թե ինչու է կրակի հրավառություն տեղի ունենում այս



տոնին, եւ ինչու է այն Տրնդեզ անվանվում, ասում է, որ երբ Տերն ընծայման բերվեց, տաճարի դուռն ինքնիրեն բացվեց, եւ ահագին ճայթյունով դղրդաց ողջ քաղաքը, եւ բոլորը վառված լույսով եկան տաճար՝ «ընդառաջ Տեառն» եւ ասացին. «Տէր էանց ընդ այս դուռս» (Տերն անցավ այս դռնով), որի համար այս տոնն անվանվեց Տյառնընդառաջ կամ «Տէր ընդ այս», որը ծեքծեքելով ու կրճատելով ասում ենք. «Տէր ընդես»:

Տաճարին ընծայմամբ կատարվեցին Մաղաքիայի մարգարեության հետեւյալ խոսքերը. «Եվ հանկարծակի Իր տաճարը կգա Տերը, Որին դուք փնտրում եք, եւ ուխտի Պատգամաբերը, Որին կամենում եք դուք» (Մաղաքիա Գ 1):

*Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ*

*Բանասիրական գիտ. թեկնածու*

# ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԵՐԿՈՒ ՏԱՂԵՐԸ



Միջնադարյան նուրբ ու պայծառ բանաստեղծի՝ Յովհաննես Թլկուրանցու վիպական ստեղծագործություններում կան նաեւ աստվածաշնչյան մոտիվներով մշակումներ: Ահա այդպիսի գեղարվեստական արժեքավոր մի գործ է «Վասն սուրբ Յովհաննու գլխատման» *(Տե՛ս **Ա. Չոպանյան**, Յովհաննէս Թլկուրանցի («Անահիտ», Փարիզ, 1931, № 5-6): Այս տաղը հրատարակված է 1513-ին Վենետիկում տպագրված «Տաղարանում»: Տաղի իր օրինակը Չոպանյանը գտել է Երուսաղեմի Ս. Յակոբյանց վանքի № 615 ձեռագրում (Էրզրում, 1592)*: Ուրիշ օրինակ նրան հայտնի չի եղել) վիպական տաղը: Մատթեոսի Ավետարանում սուրբ Յովհաննես Մկրտչի գլխատման մասին պատմող դրվագի հիման վրա ստեղծված այս գեղեցիկ տաղը մի յուրօրինակ քերթված է միջնադարյան գրականության մեջ:

Ուշ միջնադարում ստեղծված այս պատկերավոր ու հետաքրքիր տաղի աղբյուրը մասամբ Եփրեմ Ասորու հայտնի ճառն է՝ «Ի Յովհաննէս Մկրտիչն եւ ի կաքաւումն Յերոդիադայ» *(տե՛ս **Յ. Յովհաննիսյան**, Թատրոնը միջնադարյան Յայաստանում, Երեւան, 1978, էջ 222)*, մասամբ էլ հիշողություններով փոխանցված, իրականությունից ստացած հեղինակի կենդանի տպավորությունները, նրա վառ երեւակայությունը: Այս տաղը հրատարակող մեծանուն գրականագետ Արշ. Չոպանյանը ենթադրում է, որ որոշ մանրամասնություններ բանաստեղծը «թերեւս ինք երեւակայած է, կամ հայ ժողովրդական աւանդութիւններէ քաղած է, կամ թերեւս անվաւեր Աւետարաններու կամ Յայսմաւուրքներու մէջ գտած է» *(տե՛ս «Անահիտ», էջ 5)*:

Այս թեմայով մեզ հասել է նաեւ երկու ուրիշ տաղ. մեկը Գրիգոր Նարեկացուն է վերագրված, մյուսն անանուն է *(տե՛ս **Ա. Չոպանյան**, Յայ էջեր, Փարիզ, 1912, էջ 60-61 եւ 71-72)*: Իսկ «Թլկուրանցիի քերթուածը, աւելի ժողովրդական ոճով, երրորդ գեղեցիկ արտադրութիւնն է՝ նուիրուած Աւետարանի այդ խորախորհուրդ դրուագին, որ ԺԹ դարուն Ֆլոպէրներու եւ Օսքար Ուայլտներու պիտի թելադրէր իրենց գրական հրաշակերտներէն երկուքը, եւ Կիւսթավ Մորօին՝ իր նկարներուն ամենէն մոգիչներէն մէկ քինի» *(տե՛ս «Անահիտ», էջ 5)*:

Բացառիկ նրբությամբ ու քնարականությամբ մեծատաղանդ Թլկուրանցին նկարագրում է ե՛ւ Յովհաննես Մկրտչի ծննդյան (Ղուկ. Ա), ե՛ւ սրբի գլխատվելու տեսարանները (Մատթ. ԺԴ): Յրեաստանի թագավոր Յերովդեսի ժամանակներում ապրող Զաքարիա քահանան ու նրա կինը՝ Եղիսաբեթը, զավակ չունեին, քանի որ կինն ամուլ էր: Եվ ինչպես Ալեքսիանոս ճգնավորի ծնողները, այնպես էլ նրանք տաճարներում խունկ էին ծխում, անվերջ աղոթում, կատարում Տիրոջ բոլոր պատվիրանները՝ զավակ ունենալու ցանկությամբ: Ինչքա՜ն նուրբ է բանաստեղծը պատկերում նրանց որդու՝ Յովհաննեսի ծնունդը.

*«Յորժամ ծընաւ զՏէրն եւ զծառան,*
*Երկինք ւ երկիր շնորհօք լըցան*
*Յովիւքն եւ մոգքըն շարժեցան՝*
*Երկըրպագեն սուրբ ծընընդեան»*

*(տե՛ս «Անահիտ», էջ 6: Տաղից հետագա մեջբերումները եւս այստեղից են)*:

Մեծանում է սուրբը, քարքարոտ լեռներն անում իրեն բնակարան, ճաշակում *«մարախ եւ մեղր»*, քարոզում մկրտություն եւ Յորդանանի ջրերում մկրտում Աստծո Որդուն՝ Քրիստոսին, որ *«բառնայ ըզմեղըս զամենայն»*:

Յովհաննես Մկրտիչը հանդիմանում է Յերովդեսին, որը կնության էր առել իր եղբայր Փիլիպոսի կնոջը՝ Յերովդիային.

*«Օրէնք չէ քեզ առնուլ*
*Զեղբօրըդ կինն իժ ու գազան»:*

Յերովդեսը բարկանում է նրա այս խոսքերից եւ նրան փակում բանտի մեջ, բայց ժողովրդից վախենում էր, որովհետեւ նորան ընդունում էին որպես մարգարե *(տե՛ս Մատթ. ԺԴ)*: Իսկ Յերովդիան, որ անպատասխան սիրել էր Յովհաննեսին, վճռում է իր վրեժն առնել բանտարկված սրբից: Եվ թագավորի ծննդյան օրը նա զարդարում է իր դստերն ու պատվիրում.

*«Գընա՛ եւ անդ խաղա՛,*
*Յանց որ ժողովքըն հիանան.*
*Խնդրէ՛ զգըլուխըն զՅովհաննու*
*Յորժամ պարգեւք քեզ խոստանան»:*

Եվ չքնաղ աղջիկը պարում է այնպես գեղեցիկ, որ *«յիմարեցոյց զթագաւորն»*, ու այնքան հաճելի թվաց նրան, որ Յերովդեսը խոստանում է տալ այն ամենը, ինչ որ նա ցանկանա: Իսկ աղջիկն արդեն գիտեր իր խնդրելիքը՝ Յովհաննես Մկրտչի գլուխը: Դժվարանում է մի պահ Յերովդեսը գոհացնել նրան, սակայն չէր կարող դրժել իր արքայական խոստումը եւ *«առաքեաց դահիճ»*՝ կատարելու հրամանը: Եվ ահա բերում են սրբի գլուխն ու տալիս աղջկան, իսկ նա էլ այն հանձնում *«ի մայրն ամբարտաւան»*:

Գլխատված Յովհաննես Մկրտչի մարմինն իր աշակերտները դնում են գերեզման, իսկ *«հոգին գընաց առ մարգարէքն»*:

Ասաց.

*«Կուգայ անման արքայն.*
*Գայ եւ ամէնքս ազատ առնէ*
*Ի դըժոխոցն անդնդական.*
*Տանի ի դասն ի հրեշտակաց,*
*Ուրախութիւն եւ անվախճան»:*

Իսկ Յերովդիայի դուստրը՝

*«Զիւր գործ չարիքն ի պաղն եհան.*
*Պաղըն եբաց ըզիւր բերանն,*
*Մէկ շուն մարմին երկու եղան,*
*Լաշըն գընաց ի կեր ձըկանցն,*
*Գըլուխըն մընաց սառցին բերանն»:*

Աղջկա վիճակը տեսնելով՝ մայրը սարսափում է, զայրացած բողոքում Աստծու դեմ, անիծում Յովհաննես Մկրտչին, բարկությունից խելքը կորցնում է, իսկ դեմքը՝ կապտում.

*«Ձեռքըն եւ ոտքըն կապւեցաւ,*
*Ի յառիքէն քար մի անկաւ,*
*Ի վերայ գլխոյն անկեալ ջարդաւ,*
*Որպէս պիղծ շուն սատակեցաւ»:*

Տունը փլվում է չար կնոջ վրա եւ գերեզման ունենալուն անգամ չի արժանանում: Իսկ սրբի գլուխը ծառաները դնում են մի պատուհանի առջեւ՝ խորհելով, թե նրա աշակերտները թերեւս *«գին եւ կաշառ»* տալով առնեն այն: Շատ ժամանակ անց գալիս են երկու աբեղաներ, որոնք Յովհաննես Մկրտչի գլուխն այնտեղ տեսնելով՝ վերցնում են ու տանում: Ճանապարհին՝

*«Ի բրտին հանդիպեցան,*
*Վաճառեցին գուհարըն այն.*
*Բըրուտն առեալ տարաւ իւր տունն,*
*Նըշան արար խաչանըման»:*

Չափազանց հուզական ու զմայլելի այս տաղն ավարտվում է Թլկուրանցուն բնորոշ բարեմաղթանքով.

*«Ես՝ Յովհաննէս Թլկուրանցի,*
*Կարճ, համառօտ ասցի զայս բան.*
*Տէրն տայ ձեզ խաղաղութիւն,*
*Պահէ անփորձ եւ անսասան»:*

«Վասն սուրբ Յովհաննու գլխատման» վիպական տաղն «այդ զմայլելի երգչին ամենէն նուրբ էջերէն մին է, ուր իւրաքանչիւր տողը թարմ ու լուսերանգ է գարնան ծաղկի պէս» *(տե՛ս **Ա. Չոպանյան**, Յայ էջեր, էջ ԺԹ)*: Այս տաղը, կարծես, պատկերների մի հրավառություն է՝ ապշեցնող գեղեցկություններով համակված ու զարդարված: Մի սքանչելի պատկեր է Յերովդիայի դստեր պարի նկարագրությունը.

*«Գընաց մըտաւ պիղծն ի ժողովն,*
*Յոն, որ իշխանքըն կուտեցան,*
*Զվիզըն կեռեց քան զքարբի օձ,*
*Զմէջքն ոլորեց քան զաղեղան:*
*Աչօք ւ ունօք խնճով նայէր,*
*Բազուկ ձըգէր քան զուռ ճօճան,*
*Զոտքըն առեալմանիւ ճեմէր՝*
*Ի լեգէհոն զօրքն ի նման:*
*Յիմարեցոյց ըզթագաւորն,*
*Շարժեաց ի ախտ պոռնըկութեան...»:*

Այս տեսարանը հիշեցնում է Մովսես Խորենացու «Յայոց պատմության» մեջ հիշատակվող Նազենիկ վարձակի պարը, որի հոյակապ եւ անգերազանցելի նկարագիրը վերստեղծել է հանճարեղ Դանիել Վարուժանն իր «Յարճը» պոեմում: Այդպես մենապարողները հիմնականում եղել են կանայք, իսկ պարը կոչվել է «Կաքաւ» *(տե՛ս **Յ. Յովհաննիսյան,** Թատրոնը միջնադարյան Յայաստանում, էջ 221)*, որը շատ դեպքերում ունեցել է զգայական բովանդակություն եւ իմաստ:



Քանի որ եթե Տրդատը, Նազենիկին նայելով, *«շամշելով վաւաշէր»* (Խորենացի), կամ էլ Յերովդեսը հիացած ու ինքնամոռաց խոստանում է տալ այն ամենը, ինչ աղջիկը ցանկանար, ապա պետք է ենթադրել, որ նկարագրված այս պարը նման է եղել Յռոմի անկումից հետո Առաջավոր Ասիայում, հատկապես Ասորիքում եւ Բյուզանդիայում շատ տարածված կանացի հրայրքոտ ու պազշոտ մենապարերին *(հայտնի է, որ արեւմտաեվրոպական հիստրիոնների եւ ժոնգլյորների թափառական խմբերում եղել են այդ պարը ներկայացնող պարուհիներ. տե՛ս նույն տեղում, էջ 222)*:

*Շարունակելի*

***Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

## Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

# ՆԵՐԲՈՂ

## Ասված Քրիստոսի Ծննդյանը

*Սկիզբը՝ էջ 2*

Եվ քանզի արժանի եղա ես՝ նրա նշանածը, կրելու Քո Մեծությանը, մի՛ թողնիր, որ նա խեղդվի հերձվածի ալիքների մեջ, այլ խաղաղեցրո՛ւ նրան Քո հուսալից հավատով: Եղի՛ր, Տե՛ր իմ, Քո մոր վկան, քանզի շատ զրպարտեցին ինձ, եւ հավատացրո՛ւ Յովսեփին, որպեսզի նա շատերին հավատացնի»:

Եվ մինչ Յովսեփը տագնապում էր այսպիսի խորհուրդներից, քուն մտավ եւ ննջեց արդարն իր անկողնում:

Այնժամ Կույսի Որդին հրեշտակապետին հրամայեց հասնել նրա մոտ: Իջավ կարապետը, ով բերեց Թագավորի մոր ավետիսը, հայտնելու խորհուրդը Յովսեփ աստվածահորը: Յոգեղենը թռավ եւ արագորեն հասավ նրա մոտ՝ գիշերով երեւալով, որպեսզի նրա սրտից կորզի, հանի երկբայության խորհուրդը: Ահավոր փառքով երեւաց նրան, որպեսզի երկյուղից ճշմարտապես ընդունի նրա խոսքերը: Փչեց, ինչպես հողմը, փայլեց, ինչպես կայծակը, կայծեր թափեց իր թեւերից, ծագեց, ինչպես արեգակը, եւ տունը լցրեց իր ճառագայթներով: Փայլեց հրաշալի լույսը եւ զարհուրեցրեց Յովսեփին: Սկսեց խոսել եւ ասաց նրան. «Մի՛ վախենա, Յովսեփ՝ Դավթի՛ որդի»: Իր խոսքերի սկզբում մխիթարեց նրան. նա Դավթի որդի էր, եւ տեղեկացրեց նրան, որ Դավթի տնից է ծագելու Արքան, որի մասին գրեց Յակոբը (տե՛ս



Ծննդ. Խթ 10), եւ որ Ռուբենի, Շմավոնի կամ Ղեւիի տնից պիտի լինի քո նշանած Մարիամը. հայտնի է, որ նրանցից չի ծնվելու Իշխանը, որ պիտի գա, այլ Յուդայից, ու Դավթից պիտի լինի նրա տոհմը, ճշմարտապես նրանից պիտի ծագի Նա, Ով Տերն է թագավորությունների: «Արդ, դու մի՛ վախենա քեզ մոտ առնել Մարիամին, որովհետեւ նրանից Ծնվածը Բարձրյալի Որդի պիտի կոչվի. Նա պոռնկությունից չէ, ինչպես որ կարծում եք, քանզի նրա Որդին պիտի ջնջի պոռնկությունն աշխարհից: Նա Այն է, Ում մասին գրեց Եսայի մարգարեն. «Ահա կույսը պիտի հղիանա եւ որդի պիտի ծնի, եւ Նրա անունը Էմմանուել պիտի կոչվի, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ է» (Ես. Է 14): Եվ եթե այս բանը չլիներ, ապա Եսայիի մարգարեությունը սխալ կլիներ: Ահա խառնվեց Աստված մարդկանց հետ, ինչպես որ գրված է. «Ելա Յորից եւ եկա աշխարհ» (Յովհ. ԺԶ 28): Եվ այս ասելով՝ հրեշտակը գնաց:

Յովսեփն արթնացավ վախեցած, դողալով, ապշած ու զարմացած եւ փութապես խոնարհելով գլուխը՝ երկրպագում էր Կույսին, խոստովանում, փառաբանում եւ ասում էր. «Ողջո՛ւյն քեզ, սրբուհի՛, մեծ Թագավորի՛ մայր, երկրպագում եմ քեզ, քանզի կրողը եղար տերերի Տիրոջ, Ով բնակվում է քո մեջ:

Նա ստուգապես հրեշտակների Տերն է, Նրան են ծառայում հրեղենների դասերը, եւ Ինքն է Արարիչը բոլոր հոգեղենների»:

«Բայց ես կարծում եմ, որ դու չգիտես Նրա զորության մասին, քանզի ծածուկ է քեզնից»:

«Բայց ես Իր հրեշտակից իմացա Նրա մեծությունը: Եվ արդ, այժմ, որ գիտեմ, չեմ դադարի փառաբանել ու Նրա ճշմարտության մասին քարոզել զրպարտողներին: Եվ որովհետեւ երկմտեցի քո հղիության պատճառով, ո՛չ կրակը, ո՛չ սուրը եւ ո՛չ էլ մահը չեն բաժանի ինձ Նրա սիրուց: Եվ որովհետեւ կամեցա արձակել քեզ, իբրեւ մեղավորի, քա՛վ լիցի ինձ, որ մինչեւ մահ չեմ թողնի քեզ՝ սրբուհուդ, այլ որպես աստվածաբնակ տաճարի՝ ուրախությամբ ու սրբությամբ կծառայեմ քո մեծությանը»:

Ընդունեց Յովսեփը Մարիամին եւ բնակվում էր սրբուհու հետ՝ պահպանելով նրան, հնազանդվում, հավանում, պատվում, երկրպագում, մեծացնում, սպասավորում, երկնչում, լսում էր նրան մեծ դողությամբ:

Սուրբ էր անձով եւ մաքուր սրտով ու մտքով: Մարմնավոր քերովբե եղավ աշխարհում Ճարտարապետի հյուսնը: Սերովբեները, թեւերով ծածկված, սրբասացությամբ փառաբանում են Նրան, եւ Կույսը աղքատի հարկի տակ կրում է Նրան, ինչպես բոլոր մանուկներին [են կրում]:

Երկինքը նեղ է՝ Նրա մեծությունը կրելու համար, իսկ աղքատի դուստրը կրում է Նրան իր ծոցում:

Նա, Ում հրամանով սնվում են բոլոր մանուկները իրենց մայրերի որովայնում, սնվում էր Կույսի որովայնում:

*Շարունակելի*

***Գրաբարից փոխադրեց Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***

# ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ -150

Կան անհատականություններ, որոնց համար ժամանակն անցյալ չունի. ժամանակը միշտ անցնում է նրանց միջով եւ նրանցով կամրջում ավանդականն ու արդիականը, ազգայինն ու համամարդկայինը, անձնականն ու անանձնականը: Այդպիսի անհատներից մեկն էլ մեզանում Վարդգս Սուրենյանցն է, իիրավի ճշմարիտ մի մտավորական ու նկարիչ, որի ստեղծագործական ժառանգությունն ամուր հիմնաքարի նման իր վրա է կրում հայ գեղարվեստական մտքի լավագույն ու մշտամնա դրսեւորումներն ու առանձնահատկությունները՝ դարավորի մեջ նորը, նորի մեջ վաղնջականն ապրեցնելով:

Ծնվել է 1860 թ. Ախալցխայում: Սովորել է Լազարյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ուսումնարանի ճարտարապետության բաժնում: Կրթությունը շարունակել է Մյունխենի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետության եւ գեղանկարչության բաժիններում:

Հավասարապես ստեղծագործել է կերպարվեստի համարյա բոլոր բնագավառներում՝ գեղանկար, գրաֆիկա, բեմանկար, քանդակ:

Խորապես յուրացնելով ժամանակի եվրոպական, առավելապես մյունխենյան եւ ռուսական մշակույթի առաջադիմական ավանդույթները՝ Սուրենյանցն առաջիններից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ հայկական գեղանկար ներմուծեց եվրոպական արվեստի, մասնավորապես մոդեռն ոճի որոշ հնարներ: Ռուսաստանում ստեղծագործական ասպարեզ մտած, պերեդվիժնիկների ընկերության անդամ եւ նրանց համոզված գաղափարակից նկարիչը, սակայն, երբեք չօտարացավ, չհեռացավ իր ազգային արմատներից, չտրվեց օտար քաղաքակրթությունների գայթակղությանը՝ թերեւս ավելի մեծ անուն ու հռչակ ձեռք բերելու ակնկալությամբ: Որպես ստեղծագործող անհատ, որքան էլ միտքը զբաղեցրած լիներ կերպավորման զանազան խնդիրների արծարծումներով, այնուամենայնիվ նրա արվեստի հիմնական մոտիվը հայ իրականությունն էր, սեփական ժողովրդի անցած ճանապարհն ու ողբերգական ճակատագիրը: Նրա գունային ու հորինվածքային ողջ կառույցը սերվել էր հայկական միջնադարյան արվեստի ակունքներից, ժողովրդական կենսակերպի նրբերանգներից ու հայրենի՝ խիստ ու վեհաշուք բնության տպավորություններից:

Բացառիկ է Սուրենյանցի դերը պատմական թեմաներով գեղանկարչության զարգացման գործում: Հիշենք նրա «Ֆիրդուսին կարդում է «Շահնամեն» Մահմուդ Ղազնեւացուն» սքանչելի գործը: Նրա՝ հայ ժողովրդի պատմության զանազան դրվագները պատկերող բարձրարվեստ կոմպոզիցիաները («Զաբել թագուհու վերադարձը գահին», «Ոտնահարված սրբություն», «Շամիրամը Արա Գեղեցկի դիակի մոտ», «Հայ գաղթականները» նկարաշարը եւ այլն) ազգային թեմատիկ նկարի կուլտուրան հասցրին միջազգային մակարդակի: Սուրենյանցը նաեւ 19-րդ դարի ամենանշանավոր հայ բնանկարիչն է, ժանր, որտեղ լավագույնս դրսեւորվեցին Սուրենյանցի գեղարվեստական հնարների ու գունային լուծումների ներդաշն համադրումները («Հռիփսիմեի վանքը», «Քասախ գետը», «Օշական», «Անկյուն Իսպանիայում»):





Նրա ստեղծագործական ժառանգության մեջ խիստ հետաքրքիր տեղ են զբաղեցնում Մոսկվայի գեղարվեստի, Պետերբուրգի Վ. Կոմիսարժեւսկայայի, Մարինյան թատրոնների բեմադրությունների ձեւավորումները, որոնցում նկարիչը կարողացել է սքանչելիորեն հաղորդել միջավայրի եւ գործող անձանց ժամանակային ու հոգեբանական այն մթնոլորտը, որն ամբողջացնում, ի մի է բերում գրական գործի բովանդակային ողջ ուղղվածությունը: Իսկ նրա Ալ. Ծատուրյանի «Գրչի հանաքներ», Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը», Օ. Ուայլդի «Երիտասարդ թագավորը», «Արքայադստեր ծննդյան օրը» եւ «Հայկական հեքիաթներ» գրքերի նկարազարդումները գրքային արվեստի իսկական գոհարներ են:

Սուրենյանցի գեղանկարչական ժառանգության մեջ թե՛ իրենց քանակով եւ թե՛ նշանակությամբ, իիրավի, բացառիկ է քրիստոնեական, եկեղեցական թեման: Ծնված ու դաստիարակված լինելով հայ քահանայի, կրոնի պատմության ուսուցչի ընտանիքում՝ նա խորապես գիտեր՝ ինչ է քրիստոնեությունը, ինչ դեր է կատարել Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում: Նրա ապրած ժամանակաշրջանը թեւ հիմնականում շատ չէր տարբերվում նախորդ դարերից, սակայն միաժամանակ աննախադեպ էր իր օրհասականությամբ: 1915 թ. եղեռնից հրաշքով մազապուրծ եղած հայ ժողովրդի մի հատվածը կրկին ապավինեց Էջմիածնին, կրկին եւ այն էլ որերորդ անգամ Մայր տաճարը դարձավ համայն հայության հույսի ու փրկության կենտրոնը: Եվ արվեստագետն էլ, որպես ճշմարիտ հայրենասեր, որպես ազգի լավագույն մտավորականներից մեկը, չէր կարող ծնկի չիջնել Հայոց Հայրապետի առջեւ եւ չստանալ իր անելիքի պատվիրանը, չէր կարող իր խոնարհումը չբերել մարտիրոսվող, բայց նաեւ փյունիկվելու դարավոր փորձ ունեցող իր ժողովրդին, մանավանդ որ տեսել եւ ողջ էությամբ ապրել էր նաեւ նախորդ դարավերջի կոտորածների մորմոքը: Քրիստոնեության համամարդկային վեհ գաղափարախոսությունը հարազատ էր նկարչին, հարազատ ոչ միայն նրա համար, որ դա իր ժողովրդի, առաջադեմ մարդկության ընտրած ճանապարհն էր, այլ որ՝ քրիստոնեությունը հենց իր էության բուն հիմնաքարն էր, իր բարոյական կեցվածքի խարիսխն ու ոգու ազատությունը:

Քրիստոնեական թեման Սուրենյանցի արվեստում մասնավորապես ի հայտ եկավ 1900-ական թվականներից: Օսմանյան կայսրության հակահայ բիրտ քաղաքականությունը, որն ամենեւին չէր շրջանցում նաեւ քրիստոնյա այլ ժողովուրդներին, իր մեջ ավելի հեռուն գնացող վտանգ ուներ. անարդարության մասին մտորումներն ու ապրած ցավի ուժգնությունը ժողովրդին կարող էին մղել հուսահատության ու տանել Աստծուց հեռանալուն: Իր պատմությանը քաջատեղյակ նկարիչը չէր կարող չխորհել ժողովրդի ու Եկեղեցու միջեւ անհրաժեշտ կապի, նախնյաց հավատին անվերապահորեն հավատարիմ մնալու մասին:



*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ ԺԲ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ

## (1576-1590)

*Սկիզբը՝ էջ 3*

Այդ դպրոցում հայեր էլ սովորեցին, եւ նրանցից շատերը դարձան նշանավոր կաթոլիկ գործիչներ եւ քարոզիչներ: Այդ դպրոցն իր գոյությունը պահպանեց մինչեւ 1883 թվականը, երբ Լեւոն ԺԳ պապը հայերի համար հատուկ՝ Լեւոնյան դպրատունը բացեց Հռոմում:

Գրիգոր ԺԳ պապի ձեռնարկումները պայմանավորված էին Հռոմում հաստատված հայերի ներկայությամբ եւ նրանց՝ պաշտպանության թախանձանքներով: Սակայն կային նաեւ արտաքին գործոններ: Հռոմի հետ փորձում էր հարաբերություններ հաստատել Սսի կաթողիկոսությունը՝ ի դեմս իր կաթողիկոսների: 1575 թվին Խաչատուր Երաժիշտ կաթողիկոսը դրա համար դիմում է Գրիգոր ԺԳ պապին: Նպատակը Սբ Սիոնի, այսինքն՝ Հայաստանի փրկությունն էր, որի համար հայերն ակնկալում էին Արեւմուտքի օգնությունը: Դրան ի պատասխան՝ պապը նվիրակ ուղարկեց Կիլիկիա, որին հանձնարարված էր հայերին տրամադրել կաթոլիկության: Եվ հայերը հանգիստ կաթոլիկանպաստ հայտարարություններ էին անում՝ առանց հայադավանությունից հրաժարվելու: Հայերի համար հատուկ կարգված կարդինալը Ջուլիո Անտոնիո Սանսեւերինոն էր, իսկ պատվիրակության մեջ ներառվեց եպիսկոպոս Լեոնարդո Սիդոնը, որը 1583 թվին ուղեւորվեց Հալեպ՝ իր հետ տանելով Խաչատուր Երաժշտին ուղղված պապի նամակը, ինչպես նաեւ հավատո դավանության մի պատճենը: Վերջինս պիտի հիմք ծառայեր երկկողմ հարաբերությունների համար: Կաթողիկոսը, որ արդեն 80-ն անց էր, իր օգնական Ազարիա Ջուղայեցու հետ պատասխան ուղարկեց պապին: Երբ Լեոնարդոն եկավ Արեւելք, Խաչատուրն արդեն մահացած էր, իսկ նրան հաջորդել էր Ազարիան՝ 1584 թվի փետրվարին: Նա էլ գնաց Հալեպ՝ պապի պատվիրակին հանդիպելու: Բանակցությունների համար մեջտեղ բերվեց հավատո դավանության թուղթը, որը հայերեն էր թարգմանել կաթողիկոսարանի Գրիգոր Բերիացի սարկավագը: Բանակցությունները շատ ծանր էին ընթանում եւ տեւեցին մեկ տարի:

Բանակցությունների ժամանակ լուր ստացվեց, որ Ամիդում է գտնվում Առաքել աթոռակից կաթողիկոսը: Պատվիրակ Լեոնարդոն գիտեր, որ Էջմիածնի Աթոռն ավելի բարձր դիրք եւ շատ ավելի մեծ ազդեցություն ունի, քան Սսի կաթողիկոսարանը: Ուստի նա բանակցությունների մեջ մտավ նաեւ նրա հետ: Լեոնարդոն իր գրություններում մեջ հիշատակում է 85-ամյա Գրիգոր ԺԲ-ին, աթոռակից Առաքելին եւ փակակալ Դավիթին: Թադեւոսը չի հիշվում, ուրեմն նա արդեն մահացել էր: Կարծիք կա, որ Լեոնարդոն հավանության թղթեր վերցրեց երեքից էլ, սակայն Վատիկանի արխիվները քրքրողներից ոչ մեկը նման փաստաթղթեր չի հայտնաբերել: Պարզ չէ նաեւ Առաքել աթոռակցի Ամիդ գնալու պատճառը: Մ. Օրմանյանը հակված է կարծելու, որ դա եղել է պատերազմի դադարի ժամանակ, եւ Առաքելը եկել էր Ամիդ՝ օգնություն խնդրելու, քանի որ ամդեցիները գտնվում էին բարգավաճ վիճակում: Ամիդում առաջնորդ էր Սրապիոն եպիսկոպոսը, որը Ղուկաս Կեղեցու աշակերտներից էր: Նա մեծահարուստ էր: Լեոնարդոն պատերազմի հետեւանքով Էջմիածին գնալ չկարողացավ:

Լեոնարդոյի եւ Ազարիայի բանակցությունները շարունակվեցին մինչեւ 1585 թիվը: Ի վերջո մեծամասնությամբ եւ ոչ թե միաձայնությամբ որոշվեց ստորագրել առաջարկվող դավանությունը՝ Հալեպի եպիսկոպոսի տանը: Դրանից հետո Ազարիան եկավ Սիս, եւ այնտեղ գրվեց 2 նամակ՝ ուղղված կաթողիկոսին, դրանցից մեկը՝ մյուս եպիսկոպոսների կողմից: Նամակը կաթողիկսին գրվեց 1585 թ. ապրիլի 10-ին, երբ այդ օրը նա մահացավ: Ազարիան գրում է, որ կաթողիկոս չդարձած՝ ուխտ է ունեցել Հռոմ այցելելու, սակայն հիմա վախենում է մեծ փորձանքներից, եթե երկրից հեռանա: Դրա համար իր տեղն ուղարկում է Հովհաննես եպիսկոպոսին եւ Գրիգոր սարկավագին: Ուղարկում է նաեւ մի Աստվածաշունչ՝ տպագրելու համար, որովհետեւ ձեռագրերը թանկ են եւ չեն ճարվում: Ասվում է նաեւ, որ սարկավագին ուղարկում են դպրատուն՝ սովորելու: Խոսվում է «Դաշանց թղթի» եւ Կոռիկոսյանների ժամանակ հայերի ու լատինների միասնության մասին, չնայած հայերը շատ հաճախ չեն պահպանել իրենց պարտավորությունները: Նպատակը մեկն էր. օգնություն ստանալ Արեւմուտքից եւ Հռոմի պապից՝ Հայաստանի ազատագրության համար:

Մյուս նամակն ստորագրել են Աշոտի Մարտիրոս, Զեյթունի Հովհաննես եւ Հալեպի Ղազար եպիսկոպոսները, մի շարք իշխաններ եւ Հալեպի Հովհաննես քահանան: Մշտապես հիշվում են իրենց ծանր կացությունը եւ Արեւմուտքից օգնություն ստանալու հույսը:

Ի՞նչ կարելի է ասել Ազարիայի դավանագրի մասին: Ըստ էության, այն չի պատրաստվել հայերի կողմից եւ հայերի մտքով, այլ կատարյալ կաթոլիկ դավանության թուղթ էր: Այն թարգմանել էր Գրիգոր սարկավագը՝ իր հասկացած ձեւով:

*Շարունակությունը՝ էջ 6*



Կից սենյակում

# ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## Մեր հյուրն է Տաթեւի վանքի վանահայր Տ. Միքայել աբեղա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

**- Հա՛յր սուրբ, ինչո՞ւ անհրաժեշտ եղավ Աստվածորդու մարդեղացումը, եւ ինչի՞ց փրկեց մեզ Քրիստոսը:**

- Ինչպես Սուրբ Գիրքն է ասում, երբ պատվիրանազանցության պատճառով մարդն ընկավ դրախտային նախաստեղծ, երանական վիճակից, մեղքը դարձավ պատնեշ մարդու եւ Աստծո միջեւ, մարդն ընկղմվեց անգիտության խավարի մեջ: Քրիստոսն Իր մարդեղությամբ, երկրավոր կյանքի տնօրինական խորհուրդներով մարդկանց փրկեց մեղքից, սատանայի ծառայությունից, հեթանոսական բազմաստվածությունից, կռապաշտությունից, դժոխքի հավիտենական տանջանքներից՝ բերելով ճշմարիտ աստվածգիտության լույսը: Տիրոջ փրկագործությունն ինչպես լայն իմաստով ողջ մարդկության, այնպես էլ նեղ իմաստով յուրաքանչյուրիս համար է: Փարիսեցիների այն հարցին, թե ե՞րբ պիտի գա Աստծո արքայությունը, Քրիստոսը պատասխանում է. «Աստծո արքայությունը դրսից տեսանելի ձեւով չի գալիս.... Աստծո արքայությունը ներսում՝ ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 20-21): Պողոս առաքյալն ասում է. «Բոլորն էլ մեղք գործեցին եւ զրկվեցին Աստծո փառքից, բայց Նրա շնորհիվ ձրի արդարացան Քրիստոս Հիսուսի միջոցով եղած փրկությամբ» (Հռոմ. Գ 23-24): Ասում է՝ ձրի, որովհետեւ մենք ոչինչ չէինք կարող վճարել այդ փրկության համար, իսկ Քրիստոսի մի կաթիլ արյունը մեր փրկության ողջ գինը վճարեց: Յուրաքանչյուրս մեր մեջ պիտի փնտրենք այդ փրկությունը: Ինչպե՞ս. նախ պետք է գիտակցենք, որ մեղավոր ենք եւ փրկության կարիք ունենք: Քրիստոսն էլ եկավ հենց մեղավորների համար. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության» (Ղուկ. Ե 32): Փարիսեցիներն իրենց արդար էին համարում, ուստի Քրիստոսի բերած փրկությունը նրանց համար չէր: Ուրեմն փրկության առաջնային պայմանը մեղավոր լինելու գիտակցությունն է, որ առաջնորդում է մարդուն փրկության:

**- Հա՛յր սուրբ, իսկ ինչպե՞ս է մարդը գալիս այդ գիտակցությանը:**

Յուրաքանչյուր մարդու մեջ դրված է այդ գիտակցությունը, որ խղճի ձայնն է: Հիշենք Պետրոս առաքյալի ուրացության դրվագը: Ե՞րբ նրա մեջ գործեց խղճի ձայնը: Երբ աքաղաղը 3 անգամ կանչեց, «Տերը դարձավ եւ նայեց Պետրոսին», նա զղջաց իր ուրացության համար եւ «դուրս ելնելով՝ դառնորեն լաց եղավ» (Ղուկ. ԻԲ 61-62): Այս օրինակը խղճի ձայնի իրագործման ամենահստակ, ճիշտ տարբերակն է: Խղճի ձայնը փորձեց խոսել նաեւ Հուդա առաքյալի մեջ: Նա հրաժարվեց վերցնել քահանայապետերի տված 30 արծաթը, որովհետեւ հասկացել էր, որ մեղք է գործել: «Արդար արյուն թափեցի»,- ասաց նա՝ զղջալով: Նա ունեցավ մեղքի գիտակցություն, սակայն քանի որ իր հույսն ու հավատն այնքան զորեղ չէին, իսկ զղջումը Սուրբ Հոգու ներազդումով չէր, հուսահատվեց, ընկավ չարի ազդեցության տակ ու կախվեց: Այս երկու ծայրահեղ դրսեւորումների միջեւ կան խղճի ձայնի դրսեւորման տարբեր կերպեր: Հիշենք փարիսեցիների, օրենսգետների, քահանայապետերի օրինակը: Նրանց մեջ գործում էր խղճի ձայնը, նրանք զգում էին, որ սխալ արարք են գործել, բայց Հուդայի նման անկեղծ չգտնվեցին, չխոստովանեցին, որ արդար արյուն թափեցին: Այսօր շատերն են հրաժարվում Աստծո ընձեռած փրկությունից՝ խլացնելով իրենց խղճի ձայնը, խաբելով իրենց, թե իբր արդար են, նշանակում է՝ չեն զղջում: Ուրեմն մեր մեջ եղած խղճի ձայնը մի պահակ է, որ մեզ միշտ մղում է զղջման ու ապաշխարության: Հարկ է ժամանակին անսալ այդ ձայնին:

**- Ճշմարիտ զղջմամբ եւ ապաշխարությամբ մարդը դարձի է գալիս առ Աստված, կտրվում է հին կյանքի կապերից, վերածնվում իբրեւ նոր մարդ՝ ընթանալով փրկագործության ճանապարհով: Սակայն գիտենք, որ «անձուկ է դուռը, եւ նեղ՝ ճանապարհը»՝ լի փորձություններով ու դժվարություններով: Ինչպե՞ս են հաղթահարվում դրանք, եւ ի՞նչ զոհողությունների պիտի գնա փրկության ուղիով ընթացող մարդը:**

- Շատ կարեւոր է, որ մեր մեջ դրված Աստծո սերմն ընկնի պարարտ հողի մեջ եւ խոր արմատ ձգի, ինչպես Քրիստոսի պատմած առակում: Աստծո Խոսքը սերմանվում է բոլոր մարդկանց մեջ: Քրիստոսն ասում է, որ մի մաս սերմ ընկավ փշերի մեջ, որոնք եւ խեղդեցին այն: Փշերն այս աշխարհի գայթակղություններն են, վայելքները, մեղքերը: Նա, ով փրկության փափագ չունի, ով չի ցանկանում երկնքի արքայությունն ավելի, քան փողը, քան աշխարհային վայելքները, չի գիտակցում փրկության դերն ու նշանակությունն իր կյանքում, չի կարող հասնել փրկության: Այդպես եւ Ադամը չգիտակցեց իրեն շնորհված մեծ պարգեւը՝ դրախտային շնորհները, ուստի կորցրեց դրանք: Քրիստոսն ասում է. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրա կդնի եւ ապա ետ կնայի, եթե հարմար է Աստծո արքայությանը» (Ղուկ. Թ 62), այսինքն՝ փրկության ուղիով ընթացող մարդն այլեւս ետ նայելու խնդիր չունի: Այն մարդը, որ մեկ անգամ եւ ընդմիշտ ճանաչում է ճշմարտությունը եւ գնում այդ ճանապարհով, ճաշակում է աստվածային սերը, այլեւս հրաժարվում է այն ամենից, ինչը հեռացնում է իրեն Աստծուց, փրկության ճանապարհից: Զկնորսներն էլ, երբ լսեցին Քրիստոսի խոսքը, թողեցին ամեն ինչ ու դարձան մեծագույն առաքյալներ:

**- Հա՛յր սուրբ, որքանո՞վ են կարեւոր մարդու ջանքերն ու աշխատանքը՝ Աստծուց իրեն տրված շնորհները պահելու եւ շատացնելու համար:**

- Ինչպես Եկեղեցու սուրբ հայրերն են ասում, Ադամի դրախտից հետո Աստված մի նոր դրախտ տնկեց երկրի վրա, որը Եկեղեցին է: Եվ ինչպես Ադամի դրախտում բոլոր ծառերը պտղաբեր էին, այնպես էլ նոր դրախտում՝ Եկեղեցում, անպտուղ ծառ չի կարող լինել: Մեզ ամեն հնարավորություն տրված է պտղաբեր լինելու համար: Եթե բարի պտուղ չտանք, մեր հավատի ծառը կչորանա, իսկ անպտուղ ծառն Աստծո պտղալից դրախտում երկար մնալ չի կարող: Ադամն էլ, երբ անպտուղ դարձավ, կտրվեց եւ հանվեց դրախտից:



**- Սբ Պողոս առաքյալը պատվիրում է. «Ահով եւ դողով դուք ձեր փրկության համար աշխատեցեք» (Փիլ. Բ 12): Ինչպե՞ս:**

- Սբ Պողոս առաքյալը մեկ այլ տեղ պատվիրում է նաեւ մեղքի դեմ արյուն թափելու աստիճան պայքար մղել (տե՛ս Եբր. ԺԲ 4): Նախ պետք է պայքարել մտքի մաքրության ու սրբության համար, քանի որ յուրաքանչյուր մեղք նախ խորհում ենք մտքով, նոր միայն գործում: Մաքուր միտքն աղոթքից առավել մեծ զորություն ունի: Այնուհետեւ աշխատենք մեր լեզվի մաքրության համար, որովհետեւ «լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության...., որ ապականում է ամբողջ մարմինը» (Հակ. Գ 6): Երբ մարդն իր մեջ զգում է աստվածային շնորհների, Սուրբ Հոգու ներկայությունը, պետք է ահ ու դողով պայքարի՝ դրանք պահելու համար: Եվ քանի որ մտավոր պայքարը շատ ավելի արագ է տեղի ունենում, քան մեր ֆիզիկական շարժումները, ուստի չարի դեմ պայքարը մղենք մտային արագությամբ, ուշիմ եւ զգոն լինենք, որ հաղթանակենք ու չպարտվենք:

**- Հա՛յր սուրբ, կարելի՞ է ասել, որ այս ժամանակավոր կյանքը տրված է մեզ՝ փրկությունը, հավիտենականությունը ժառանգելու համար:**

- Այո՛: Համեմատենք ժամանակավորը հավիտենականի հետ: Մեր կյանքը, որքան էլ լինի, 70-100 տարի է, մի ակնթարթ՝ հավիտենականության համեմատ: Որքա՜ն մեծ շնորհ, մեծ հնարավորություն է տվել մեզ Աստված: Տվե՛ք մի ակնթարթ եւ շահեք հավիտենականությունը: Եվ եթե հանուն հավիտենականության ուզում եք զոհել այդ ակնթարթը, իմացեք, որ այդ էլ ապրած կլինեք, բայց եթե հանուն մի ակնթարթի անտեսեք հավիտենականը, այդ մի ակնթարթն էլ ապրած չեք լինի, որովհետեւ առանց Աստծո ապրած որեւէ կյանք ոչինչ է, իսկ Աստծով ապրած ամենակարճ կյանքն անգամ իմաստավորված եւ իսկապես ապրված կյանք է: Հիշենք մի հետաքրքիր պատմություն. մի նշանավոր զորավար, շրջելով վանքի գերզմանոցում, գերեզմանաքարերի վրա տեսնում է տարօրինակ արձանագրություններ: Նշված են լինում ծննդյան եւ մահվան տարեթվերը. բավական երկար ապրված կյանքեր, սակայն գրված է լինում. «Ապրեց 3 ամիս», կամ՝ «Ապրեց 5 ամիս»: Զորավարը հարցնում է վանահորը, թե ինչ են նշանակում այդ արձանագրությունները: Վանահայրը բացատրում է, որ այդ ննջեցյալների ապրած երկարատեւ կյանքի միայն այդ կարճ ժամանակահատվածն է եղել իսկապես ապրված, որովհետեւ նրանք այդ մի քանի ամիսն են ապրել իմաստավորված՝ աղոթքներով, Աստծով, բարեգործությամբ: Այսօր եթե քննենք մեզ, կտեսնենք, թե մեր կյանքում որքա՜ն զուր ժամանակ ենք անցկացրել:

Շարունակությունը՝ էջ 8

# ԳՐԻԳՈՐ ԺԲ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ

## (1576-1590)



Սկիզբը՝ էջ 5

Դա, ըստ էության, հարկադրաբար առնված թուղթ էր, այն էլ՝ մեկ տարի տեւած բանակցություններից հետո, եւ ընդունվել էր միայն օգնություն ստանալու համար: Հայտնի չէ, թե այն ինչ արդյունք ունեցավ: Ազարիան Հայոց Եկեղեցու ներկայացուցիչ է, սակայն դավանանքը Հայոց Եկեղեցու հավանությունը չէր ստացել: Ոչ էլ դրա համար օրինական ժողով էր գումարվել: Ազարիայի ստորագրությունն արժեք չուներ Հայոց Եկեղեցու համար: 1585 թվի մայիսի 1-ին Լեոնարդոն ստիպում է Ղազար եպիսկոպոսին եւ Գրիգոր սարկավագին՝ վավերացնել Ազարիայի ստորագրությունը: Հետո պապական գրության մեջ աղավաղվել է Ազարիայի անունը՝ վերածվելով Զաքարիայի: Նույնիսկ անվան ճշտությունը հռոմեացիների համար կարեւորություն չուներ:

Ի՞նչը եղավ Ազարիայի ձեռագրի հետեւանքը: Ազարիայի դիրքերը խախտվեցին: Ընդհանուր դժգոհություն բարձրացավ: Մեկ տարի անց նրա փոխարեն կաթողիկոս է ձեռնադրվում Տիրատուր Սսեցին, որը երկու տարի եղել էր Կոստանդնուպոլսի պատրիարքը: Սակայն այս գործերն էլ հաջող չընթացան, եւ նրան փոխարինեց Հովհաննես Այնթապցին, որ հայտնի է նաեւ Բարեբարո մականունով: Նա կաթողիկոս դարձավ 1588 թվին: Կիլիկիայում միաժամանակ հայտնվեց երեք կաթողիկոս, սակայն Սսում հաստատվում է Հովհաննեսը: Ըստ որում, այս ամենը պայմանավորված էր Ազարիայի՝ Հռոմի հետ ունեցած հարաբերություններով: Այլ խոսքով՝ Կիլիկիայում շատերը համաձայն չէին Հռոմին դավանաբանական զիջումներ անելուն:

Ազարիան, հայտնվելով ծանր կացության մեջ, գնում է Կոստանդնուպոլիս, որտեղ Հակոբ պատրիարքից հետո գահակալել էին Հովհաննես Դիարբեքիրցին՝ 1573-ին, Թովմաս Գաղատացին՝ 1581-ին, Սարգիս Ուլնեցին՝ 1590-ին: 1591-ին նա հեռացնում է Հովհաննեսին եւ ձեռք ձգում պատրիարքությանը: Իրականում նա կամենում էր Սսի աթոռը ետ վերադարձնել: 1592-ին գալիս է Սիս եւ կարողանում է հաղթել Տիրատուրին ու Հովհաննեսին եւ տիրել Սսի աթոռին: Դրանից հետո նա մոռանում է Հռոմն էլ, հայ-հռոմեական հարաբերություններն էլ: Նա մահացավ 1601 թվին եւ թաղվեց Բերիայի (Հալեպի) եկեղեցում: Ազարիայի մահից հետո Հովհաննես Այնթապցին գրավեց Սսի կաթողիկոսությունը: Հնարավոր է, որ դա եղել է մինչեւ Ազարիայի մահը, քնաի որ Ազարիան ստիպված էր եղել հեռանալ Բերիա: Այստեղ Ազարիային փոխարինեց Պետրոս Կարկառեցին, որը պաշտոնավարեց 7 տարի եւ մահացավ 1608 թվին: Հովհաննես Այնթապցին միահեծան վարեց Սսի կաթողիկոսարանը մինչեւ իր մահը՝ 1627 թիվը:

Ազարիայից հետո՝ 1592 թվին, Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ կրկին Սարգիս Ուլնեցին, որը, սակայն, 4 տարի անց տեղի տվեց Տիրատուր Սսեցուն, որն Ազարիայի պատճառով հեռացել էր Սսից: Հնարավոր է, որ Սարգիսը զիջել էր Տիրատուրին, քանի որ նրա կողմից էր եպիսկոպոս ձեռնադրվել: Սակայն Տիրատուրը երկար չմնաց պատրիարքական աթոռին: Հայոց կաթողիկոսությունները, որոնք բոլորն էլ գտնվում էին օսմանյան տիրապետության տակ, Բարձր դռան աչքում առանձին արժեք չունեին: Կրոնական հարցերում նրանք հենվում էին առաջին հերթին Կոստանդնուպոլսի պատրիարքության վրա: Սերտ կապեր կային Կոստանդնուպոլսի պատրիարքության եւ Սսի կաթողիկոսության միջեւ, ինչը հավաստում է Սսի կաթողիկոսների հայտնվելը պատրիարքական աթոռին: Սակայն Էջմիածնի՝ օսմանյան գերիշխանության ներքո հայտնվելով՝ Էջմիածնի ազդեցությունը Կ. Պոլսի պատրիարքության վրա գնալով ուժեղացավ, եւ այն որոշակիորեն կապվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

Գրիգոր ԺԲ կաթողիկոսը մահացավ, ըստ Առաքել Դավրիժեցու, 1593 թվին՝ 95 տարեկան հասակում: Հավանաբար նա զառամել էր եւ կաթողիկոսական գործերից հեռացել: Մ. Օրմանյանը հավանական է համարում նրա կաթողիկոսությունը մինչեւ 1590 թիվը:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ -150



Սկիզբը՝ էջ 5

Նա թեեւ հավատում էր իր ժողովրդի դարավոր փորձին, հավատում էր Հայոց Հայրապետի, իր օրերին առավելապես Խրիմյան Հայրիկի եւ Գեւորգ Ե կաթողիկոսների իմաստությանը, բայց ոչ պակաս կարեւորում էր նաեւ մտավորականության կատարելիք գործն ու պահվածքը, երբ դրսում թշնամին չի պատրաստվում երբեւէ սուրը պատյանը դնել: Խաչյալի անմահության գաղափարի մասին խոսելը նաեւ անհատի, մտավոր ու մտահոգ անհատի պարտքն էր: Եվ խոսեց նկարչի վրձինը: Վերստին հիշենք Սուրենյանցի «Հռիփսիմեի վանքը» կտավը, ինչը միայն ճարտարապետական կոթողի գեղանկարչական փայլուն վերարտադրություն չէ, այլ հավատի սյուն, հավերժության խորհրդանիշ:

Այս գաղափարն են իրենց մեջ կրում նաեւ նկարչի «Թափորի ելքը Էջմիածնի տաճարից», «Լքյալը», «Երկրպագություն խաչին», «Անիի կանանց ելքը եկեղեցուց» աշխատանքները, ուր եկեղեցական ճարտարապետության դրվագների պատկերումների շնորհիվ նկարիչը շեշտում, ուժգնացնում է հոգեւորի ու մտավորի այն ներդաշնությունը, որ կարող է ազգի գոյության լավագույն առհավատչյան լինել, ազգի հավերժության այն աներկբայությունը, որով նա ի զորու է սանձահարել բոլոր մարտահրավերները: Այս շարքում առանձնակի տեղ ունի «Ոտնահարված սրբություն» մեծադիր կտավը՝ ստեղծված 1895 թվականի կոտորածի անմիջական տպավորության տակ: Գազանաբարո ու վայրագ թշնամին իր հետեւից եկեղեցու պատերից ներս թողել է սպանված հայ հոգեւորականին, պոկված ու կախ ընկած բեմի վարագույրը, սալահատակին անարգված ու շաղ տրված Սուրբ Գրքերը, մոմն ու բուրվառը... Սակայն կանգուն են եկեղեցու պատերն ու պատին ագուցված խաչքարը, սրբապատկերն ու վիմական արձանագրությունները, այսինքն՝ հայոց հանճարը՝ իր ողջ վեհությամբ ու գեղեցկությամբ, էությամբ ու բովանդակությամբ, գալիքին նայող աներկբա հաստատակամությամբ: Մեկ ու կես միլիոն կյանքը չէ հավերժողը, այլ դեպի մեծ կյանքը տանող ճշմարիտ ուղին, այն ոգեղեն ու անժամանակյա հունդը, որ ծլարձակում ու բերք է տալիս Ժամանակի մեջ ու միավորվում Նրան՝ դառնալով հավերժության ու հավիտենության ուղեկիցը: Սա էր Սուրենյանց մտավորականի կրկնելիքը ապրողներիս:



Սուրենյանցի ոչ միայն քրիստոնեական թեմաների, այլեւ ողջ ստեղծագործական ժառանգության մեջ առինքնող հմայք ու հնչեղություն ունի «Աստվածամայրը գահի վրա» հանրահայտ աշխատանքը: Անշուշտ, թե՛ կոմպոզիցիոն հիմնական կառույցը եւ թե՛ ինքը՝ Տիրամայրը, ավանդական պատկերացումների սահմաններից դուրս չեն, սակայն ինչպես Նարեկացու, նույնպես եւ նկարչի Տիրամայրը միանգամայն կոնկրետ է իր նկարագրի մեջ, միանգամայն հողեղեն խիստ մտերմիկ ու հասանելի է: Ուշագրավ է Աստվածամոր ու մանուկ Հիսուսի զարմանալի նմանությունը: Արդյոք պատահականությո՞ւն է, որ նկարիչը անմեղության ու անարատության նույնակերպ արտահայտության հետ մեկտեղ թե՛ մորը եւ թե՛ Մանկանը պատկերել է նաեւ անստվեր խոհունությամբ: Ամենեւին ո՛չ: Սուրենյանցի համար Հիսուսը՝ մանուկ թե հասուն այր,



ու կենդանի: Սուրենյանցի Աստվածամայրը հայուհի է, հայակերտ գահին նստած, ոտքերի տակ՝ հայկական գորգ, հետնամասում՝ հայկական կառույց, հեռվում՝ երեւացող հայկական լեռնային բնաշխարհ: Մանկամարդ ու լուսափթիթ դեռատուհին՝ որպես Աստծո մայր, որպես բարեխոս սուրբ, Աստծո Որդին է՝ Աստված, եւ բնականաբար տարիք չունի: Նկարչի աստվածաշնչյան պատումների գեղանկարչական վերարտադրումներից («Սալոմե», «Ավետում» (երկու տարբերակ), «Խաչելություն», «Գեթսեմանիի աղոթքը») կարելի է առանձնացնել «Եկայք առ իս...» կտավը, որի բուն ասելիքը հասցեագրված էր հենց իր՝ յաթաղանից մազապուրծ եղած, հուսահատության ու շփոթության մեջ գտնվող ժողովրդին: Նկարչի խիստ մարդկայնացված Քրիստոսը մարդկային բոլոր տառապանքների ու ցավերի խորապես կրողն է եւ այդ ամենն ու ավելին Իր մեջ ներփակած, առավել պակաս վաստակածներին, բեռնավորվածներին դեպի Իրեն է կանչում՝ սեր ու հանգստություն, ջերմություն ու խաղաղություն տալու համար: Նկարչի Քրիստոսից, որպես Աստծո Որդուց, իիրավի, հայրական մեծ գութ ու ողորմություն, անշահախնդիր սեր ու քնքշանք են բխում: Անտարակույս, կերպարը մարմնավորված է Տիրոջ անձը հենց այդպիսին ճանաչելու հաստատ հավատով: Այդ հավատով են շնչում նաեւ նկարչի բոլոր կրոնական թեմաներով արված գործերը:

Սուրենյանցի դիմանկարային գործերի մեջ իր առանձնակի տեղն ունի «Խրիմյան Հայրիկը»: Գահաթոռին նստած ծերունազարդ Հայրիկը չափազանց առինքնող է: Նա, ասես, իր բարի ու խոհուն աչքերի մեջ թաքցրած պահում է տառապյալ հոգու ճիչը, ամուր բռունցքված ձեռքերում՝ մղկտացող ցավի շիթը, իսկ հատակին նետված նամակում՝ իր համայն հոտի ընդվզումը՝ հզորների անբարո կեցվածքի դեմ: Ամբողջության մեջ Հայոց Հայրապետը մի ողջ ժողովրդի հոգեւոր ու բարոյական վեհ կեցվածքի կրողն է՝ Խաչյալի անմահության ու մեծ սիրո կնիքը դեմքին:

Սուրենյանցը, շնորհիվ բացառիկ օժտվածության, լայն մտահորիզոնի, բազմակողմանի ու խոր գիտելիքների, բազում լեզուների իմացության (տիրապետել է ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներին), ոչ միայն կերպարվեստում, այլեւ հայ մշակույթի մյուս հիմնական բնագավառներում թողեց իր անջնջելի հետքը: Նրա ճարտարապետության, կերպարվեստի տարբեր խնդիրներին անդրադարձող հոդվածներն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունն ու թարմությունը: Նույնը համարձակորեն կարելի է ասել նրա՝ բնագրերից կատարած թարգմանությունների մասին (Շեքսպիր, Հայնե, Գյոթե, Ուայլդ):

Ընդհանրապես Սուրենյանցի ստեղծագործական ողջ ժառանգությունը՝ իր ինքնատիպ ու առինքնող ձեռագրով, թեմատիկ ու գաղափարական բովանդակությամբ, սեփական ժողովրդի վաղվա օրվա հանդեպ հավատով, անմնացորդ նվիրումով մատուցված ծառայություն է, որի արժեքը հայ կերպարվեստի եւ քրիստոնեական մշակույթի մեջ անկրկնելի է եւ ցավոք դեռեւս ըստ հարկի չուսումնասիրված:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

# ԼԵՍԻՆԳԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

## Լեսինգը գեղանկարչության եւ ճարտարգության սահմանների մասին



Սկիզբը՝ 2009 թ. թիվ 22-24

Լավագույն կերպարները, որոնք մարմնավորվել են անտիկ քանդակագործների կողմից, ըստ Վինկելմանի, արտահայտում են մարդկային ոգու անպարտելիությունը եւ վեհությունը: Այդպիսին է Լաոկոոնը: Դաժանորեն տանջվելով ցավից, տեսնելով աչքի առաջ իր կործանվող զավակներին՝ Լաոկոոնն ամրակուռ ոգով հաղթահարում է ճակատագրի հարվածները՝ առանց ճիչի եւ կատաղության, մարդկային արժանապատվության հստակ գիտակցությամբ: «Նրա վիշտը հուզում է մեզ մինչեւ հոգու խորքը, սակայն կուզենայինք դրա հետ մեկտեղ ի վիճակի լինել այնպես հաղթահարելու տառապանքը, ինչպես այդ մեծ այրը»:

Վինկելմանը սրան զուգահեռ կարեւորություն է տալիս բարոյական տարրին: Ըստ նրա՝ այլաբանական գեղանկարչությունը ոչ միայն կարող է, այլեւ պետք է մրցակցի քնարերգության հետ՝ տեսանելի առարկաների պատկերման մեջ: Այստեղ չկա, ըստ երեւույթին, ոչ մի տեսակի հակասություն, որ գեղանկարչությունն էլ ունենա այնպիսի լայն սահմաններ, ինչպիսին որ ունի քնարերգությունը:

Լեսինգը «Լաոկոոնում» Վինկելմանին հակադրում է անտիկության գեղարվեստական իդեալների այլ ըմբռնում: Հույները, ապացուցում է Լեսինգը, ի տարբերություն Կոռնելի եւ կլասիցիզմի այլ ներկայացուցիչների, իրենց սիրելի հերոսների մեջ գնահատում էին ո՛չ աներեր հերոսականությունը, ո՛չ էլ ոգու սառը վեհությունը. հունական արվեստի իդեալական կերպարներն այնպիսի կերպարներ են, որոնք հերոս են մնում՝ չդադարելով լինել մարմնեղեն մարդիկ: Դա այն իդեալն է, որ պաշտպանում է Լեսինգը՝ ի հակադրություն Վինկելմանի, եւ որին էլ նա համարում է անտիկ արվեստի իդեալական չափանիշը:

Լեսինգը թեեւ համաձայնում է Վինկելմանի հետ, որ «Լաոկոոնի» ստեղծողները ձգտել են վեհացնել նրա նկարագիրը, որի պատճառով էլ նրան պատկերել են հառաչող եւ ոչ թե ճչացող, սակայն դա Լեսինգն այլ ձեւով է բացատրում, քան Վինկելմանը: Գեղեցկության օրենքը, ըստ Լեսինգի, բարձրագույն օրենք է միայն կերպարվեստում, իսկ քնարերգության մեջ բարձրագույն օրենք է ճշմարտությունը: Կյանքի հակասությունները՝ տառապանքը, ցավը, ըստ Լեսինգի, այն ասպարեզը չեն, որ հեռանան իդեալից, ինչպես ենթադրում էր Վինկելմանը, այլ կյանքի կարեւորագույն կողմերից մեկը, որից չի կարող երես թեքել արվեստը: Եթե պլաստիկ արվեստների եւ հատկապես քանդակագործության բնույթը պահանջում է մարմնական ցավի, տառապանքի անհատական գծերի նկարագրության համար որոշակի սահման, ապա քնարերգության ասպարեզում արվեստագետն այդպիսի նեղվածություն չի զգում: Այդ է պատճառը, որ բուն հունական արվեստում՝ հառաչող Լաոկոոնի քանդակային նկարագրության կողքին, մենք հանդիպում ենք հոմերոսյան ճչացող կերպարների:

Վինկելմանը կոչ էր անում արվեստում ոչ թե պատկերել իրական կյանքն իր հակասություններով, այլ վերացական, իդեալականացված հերոսական կերպարներ, որոնք պահում են ոգու վեհությունը, հանգստությունը եւ բարեծին պարզությունը՝ կյանքի այլանդակությունների դեմ: Նա հաստատում է արվեստում եւ կյանքում ակտիվ, արիական մարդուն, որը չի խուսափում կյանքի դժվարություններից, պայքարից, եւ այդ բոլորը գիտակցելով՝ խիզախորեն գնում է նրանց ընդառաջ: Լեսինգի հերոսը «մարդ-հերոսն է», որը հավատարիմ է իր ձայնին, ընդվզում է ճնշումների դեմ եւ համարձակորեն ելնում է դրանց դեմ պայքարի:

Հենց այդպիսին են հին հունական արվեստում ստեղծված կերպարները, մասնավորապես՝ Սոֆոկլեսի «Փիլոկտետ» ողբերգության հերոսները: Սոֆոկլեսը պատկերում է Փիլոկտետին այն պահին, երբ նա երկար տարիներ տրտմում է անմարդաբնակ կղզում՝ տանջվելով մենակությունից ու տանջող վերքերից: Հերոսական է այն մարդը, ով անշեղորեն մերժում է թշնամիների՝ իրեն ազատություն տալու խոստումները. պայմանով, որ նա ծառայի նրանց շահերին: Այսպիսով, նրա մեջ միավորված են մարդկայինը եւ հերոսականը, բարոյական գծերը՝ հզոր կամքի հետ:

Շարունակությունը՝ էջ 8

# ԼԵՍԻՆԳԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

## Լեսինգը գեղանկարչության եւ քնարերգության սահմանների մասին

*Սկիզբը՝ էջ 7*

▼▼▼

«Լաոկոոնի» հայտնվելը մեծ ազդեցություն թողեց Գերմանիայի առաջավոր հանրության, հատկապես մտավորականության վրա: Լեսինգի այս տրակտատի առավել նշանակալից արձագանքն ու վերլուծությունը եղավ Հերդերի «Քննադատական անտառներ» աշխատանքի առաջին թողարկումը 3 տարի հետո՝ 1769 թ.: Յոհան Գոթֆրիդ Հերդերը (1744-1803) զբաղեցնում է գերմանական Լուսավորության մեջ առանձնահատուկ տեղ: «Գրոհ եւ փոթորիկ» շարժման տեսաբաններից մեկը, որը մեծ ազդեցություն է թողել երիտասարդ Գյոթեի վրա, ժամանակի ամենախոշոր պատմական մտածողն էր: Հերդերի խոր պատմականությունը, տարերային դիալեկտիկայի տարրերը, որոնք հատուկ էին նրա հայացքներին, տեղ գտան «Լաոկոոնի» վերլուծության մեջ:

Հերդերը «Լաոկոոնի» առթիվ մի շարք լուրջ դիտողություններ է անում, որոնք էլ ճանաչել են տալիս Լեսինգի աշխատության գեղագիտական հայացքների ուժեղ ու թույլ կողմերը: Լեսինգը, վերլուծելով հունական դիցաբանությունը, հոմերոսյան էպոսը, ըստ Հերդերի, հստակ չի պատկերացնում դրանց պատմական ինքնատիպությունը, նրանց վերագրում է գծեր, որոնք համապատասխանում են ոչ թե անտիկ շրջանին, այլ իր ժամանակի բարքերին ու հոգեբանությանը:

Հունական մշակույթի առանձնահատկությունը, պնդում է Հերդերը, ոչ այնքան ազգային առանձնահատկություններն են, որքան հատկություններ, որոնք բնորոշ են մարդկության զարգացման որոշակի պատմական ժամանակաշրջանին: Բոլոր ժողովուրդներն իրենց զարգացման որոշակի աստիճանում վերապրում են մի հասակ, որը բավականին նման է հին հունական մշակույթին: Ժողովուրդների հերոսական երկերը եւ միջնադարյան դեռեւս թերզարգացած ժողովուրդների քնարերգությունը՝ իրենց ողջ ինքնատիպությամբ հանդերձ, ազգակցական կապ ունեն հոմերոսյան էպոսի հետ: Լեսինգը հաշվի չի առել, որ անտիկ շրջանում մարդը կտրված չէր կոլեկտիվից: Նրա ապրած զգացմունքները սուբյեկտիվ չէին, ինչպես հետագա դարերում:

Հերդերը, անդրադառնալով Լեսինգի «Լաոկոոնի» հիմնական գաղափարին, կերպարվեստի եւ քնարերգության օրենքների տարբերությանը, նույնպես առաջ է քաշում առարկություններ դրանց նկատմամբ: Հերդերը նկատում է, որ Լեսինգը, սահմանելով քնարերգության, որպես արվեստի տեսակի, ընդհանուր գծերը, հիմնվում է բացառապես Հոմերոսի օրինակի վրա, որի պոեմները նա համարում էր քնարերգության տեսակի լավագույն արտահայտությունը: Ի միջի այլոց, Հոմերոսի պոեմները ոչ թե ողջ քնարերգության, այլ միայն էպոսի տեսակին են վերաբերում: Ուսումնասիրելով հին շրջանի բանաստեղծներին՝ նկատում ենք գծեր, որոնք հաշվի չի առել Լեսինգը: Այդպիսիք են Տիրտեյը, Անակրեոնը, Պինդարոսը: Պատմական զարգացման ընթացքում քնարերգության ձեւերը ենթարկվում են բազմաթիվ ձեւափոխությունների, այդ պատճառով քնարերգության եւ նրա տեսակների սահմանները շարժական են, փոփոխական եւ չեն ենթարկվում մշտական, ավարտական սահմանման:

Նույնը վերաբերում է եւ գեղանկարչությանը. շարժումն անքակտելի է նյութից, գործողությունը՝ մարմիններից: Շարժումից զրկված մարմինը կենդանի չէ, այլ մեռած: Միայն շարժումը, արտահայտությունը, գործողությունն են կյանք տալիս մարմնական օբյեկտներին, որոնք պատկերում են քանդակագործները եւ գեղանկարիչները: Ըստ Հերդերի՝ այդ խնդրի լուծմանը ճշմարտացի է մոտեցել Ջեյմս Գարրիսը, որն իր «Չրույց երաժշտության, գեղանկարչության եւ քանդակագործության մասին» ուսումնասիրության մեջ արվեստները տարատեսակների է բաժանել. նախ՝ մի տեսակ, որն ընկալվում է անմիջապես, եւ այլ տեսակ, որ մարդու վրա ազդում է հուզականորեն, եւ այդ ընկալման գործընթացը երկարատեւ է: Քանդակագործի կամ գեղանկարչի ստեղծագործությունը, նկատում է Հերդերը, ընկալվում է աչքերով՝ իր պատրաստի, վերացական տեսքով: Իսկ քնարերգության երկը ներկայացնում է տեւական գործընթաց: Որպեսզի ազդեցությունը լինի ուժեղ, անհրաժեշտ է, որ այն զգացվի ընթերցանության ողջ ընթացքում, այսինքն՝ բանաստեղծական երկը յուրաքանչյուր պահի պետք է եռանդուն, գայթակղիչ ուժով ազդի երեւակայության եւ զգացմունքի վրա: «Գեղանկարչությունը կերտում է ստեղծագործություն, որն աշխատանքի ընթացքում ոչինչ է, իսկ ավարտելուց հետո՝ ամեն ինչ: Իսկ ահա քնարերգությունը ներծծված է էներգիայով. այստեղ հենց աշխատանքի բուն ընթացքում հոգին պետք է ընկալի այդ էներգիան եւ ոչ թե սկսի ընկալել միայն այն ժամանակ, երբ արդեն աշխատանքն ընդհատված է:

Հերդերը ճիշտ է նկատել Լեսինգի եւ նրա ժամանակակից լուսավորիչների հայացքների պատմական սահմանափակությունը: Հերդերի վաստակն այն է, որ նա ընդգծում է «Լաոկոոնի» ոչ միայն գեղագիտական կատեգորիաների ճկունությունը եւ պատմականորեն փոփոխական լինելը, այլեւ գեղարվեստական ստեղծագործության ակտիվ, գործունյա բնույթը, գեղագիտական ընկալումը, արվեստում զգացմունքի եւ երեւակայության դերը: Լեսինգը, ով տեսել էր արվեստում բազմաթիվ տարաբնույթ պատմական կապեր, չի նկատել, որ կերպարվեստի՝ գեղանկարչության եւ քանդակագործության մեջ նույնպես գոյություն ունեն բաժանող սահմաններ: Ընդունելով, որ կան տարբերություններ անտիկ եւ ժամանակակից արվեստների միջեւ, Հերդերը Լեսինգի գեղագիտական հայացքներում գերապատվություն է տալիս անտիկ արվեստին: Դա է պատճառը, որ անգամ անդրադառնալով Դանթեին, Շեքսպիրին, Ռաֆայելին՝ նրա եզրակացությունների աղբյուրը, համենայն դեպս, մնում է անտիկությունը: Ինչպես Լեսինգի, այնպես էլ իր շրջանի կլասիցիստների համար բարոյական չափանիշները եւ օրենքները, որ քաղում են անտիկ շրջանից, համարում են հարմար բոլոր դարաշրջանների եւ բոլոր ժողովուրդների համար:

Բանավիճելով Վինկելմանի հետ՝ նա իդեալականացնում է անտիկ արվեստը, այն համարում մարդկային բնույթի հավերժական եւ անփոփոխ հատկություն:

Արվեստում «պլաստիկ» եւ «բանաստեղծական» սկզբունքների տարբերությունների մասին Լեսինգի մտքի հետեւում թաքնվում էին, ըստ էության, անտիկ եւ բուրժուական արվեստների պատմական զարգացման մասին պատկերացումների հունդերը: Հենց այդպիսի ոգով են վերաիմաստավորվել «Լաոկոոնի» հիմնական գաղափարները: Նա գտնում էր, որ «Լաոկոոնում» նկարագրված կենդանագրական պլաստիկ եւ բանաստեղծական սկզբունքների հակադրությունն ունի հավասար նշանակություն հին աշխարհի եւ նոր ժամանակի արվեստի համար: «Լաոկոոնի» քննադատները, հատկապես Հերդերը, ոչ միայն թույլ կողմերն են մատնանշել, այլեւ այն մտքերը, որոնք իրենց նշանակությունը չեն կորցրել գայսօր: Այդ մտքերից մեկն արվեստի եւ քնարերգության իրատեսական բնույթն ընդունելն էր:

Ի հակադրություն Լեսինգի՝ Հերդերը ճշմարտացիորեն ընդգծում է արվեստում զգացմունքի եւ երեւակայության ակտիվ դերը: Սակայն կա Լեսինգի նաեւ մի կարեւոր նվաճում. նա ձգտում է իր ոգով ճանապարհ հարթել արվեստում ազատության եւ անհրաժեշտության հարաբերությունների դիալեկտիկական ըմբռնման համար:

Ռոմանտիզմի դարաշրջանում «բանաստեղծական» գեղանկարչության եւ «գեղանկարչական քնարերգության գաղափարները, որոնց դեմ պայքար էր մղում Լեսինգը, ձեռք բերեցին նոր գոյություն:

Լեսինգը ձգտում էր բացահայտել տարբեր արվեստների յուրահատուկ առանձնահատկությունները, որպեսզի էլ առավել ամրապնդի դրանց կապը կյանքի հետ: Ահա թե ինչու Լեսինգի ուսմունքը՝ գեղանկարչության եւ քնարերգության յուրահատուկ օրենքների մասին, ոչ միայն չի կորցրել իր նշանակությունը արդիականության համար, այլեւ ձեռք է բերել հատուկ հրատապություն:

***Ռոմանոս ՍԱՀԱԿՅԱՆ***
***Բանասիրական***
***գիտ. թեկնածու, դոցենտ***

# Էկումենիկ աղոթք Թբիլիսիի Սբ Էջմիածին եկեղեցում



Հունվարի 25-ին Թբիլիսիի Սբ Էջմիածին եկեղեցում տեղի ունեցավ Էկումենիկ աղոթքի արարողություն: Աղոթքին մասնակցում էին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հարավային Կովկասի աշխատակազմի ղեկավար Ջուզեպպե Պազոտոն, Վրաստանում Ավետարանական Մկրտական Եկեղեցու առաջնորդ Մերաբ Գափրինդաշվիլին եւ Վրաստանում Գերմանական Լյութերական Եկեղեցու եպս Խանս Յոխանսոն Կիդերլենը:

Ներկաներին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս Միրզախանյանի անունից ողջունեց Տ. Նարեկ քհն. Ղուշչյանը: Իրենց ողջույնները հավատացյալ ժողովրդին ուղղեցին նաեւ մասնակից Եկեղեցիների առաջնորդները:

Էկումենիկ աղոթքին մասնակցում էին նաեւ Թբիլիսիի Սբ Էջմիածին եկեղեցու, Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու, Սբ Մարիամի Հարության եկեղեցու, Ավետարանական Մկրտական կենտրոնական եկեղեցու եւ Գերմանական Լյութերական Մայր եկեղեցու երգչախմբերը:

Ինչպես եկեղեցու հոգեւոր սպասավորների աղոթքները, այնպես էլ երգչախմբերի բազմալեզու եւ բազմերանգ երգեցողությունը մեծ տպավորություն գործեցին ներկա հայ եւ այլազգի հավատացյալների վրա:

Ներկա ժողովրդին հոգեւոր պատգամով դիմեց Տ. Վազգեն եպս Միրզախանյանը:

Էկումենիկ աղոթքին ներկա էին Վրաստանի նախագահի խորհրդական պրն Վան Բայբուրթյանը, Վերինտեգրման պետնախարարի տեղակալ տիկ. Ելենա Թեւդորաձեն, Վրաստանում Լեհաստանի դեսպան տիկ. Ուրսուլա Դորոզեւսկան, Վրաստանում ՀՀ դեսպանության մշակույթի գծով խորհրդական պրն Եղիա Մանուրյանը, Վրաստանի հայ համայնքի նախագահ պրն Գենա Մուրադյանը եւ պետական, հասարակական ու քաղաքական այլ գործիչներ:

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

# ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## Մեր հյուրն է Տաթեւի վանքի վանահայր Տ. Միքայել աբեղա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ

*Սկիզբը՝ էջ 6*



**- Աստվածհայտնության քաղցրությունն ապրած, փրկության լուսավոր ուղին ընտրած մարդն ինչպե՞ս կարող է իր երախտագիտությունն ու շնորհակալությունն արտահայտել Փրկչի հանդեպ եւ երբեւէ կարո՞ղ է...**

- Նախ՝ իր աղոթքներով, գոհաբանություններով: Եվ ինչպես Աստված, Իր սիրուց մղված, ստեղծեց ողջ աշխարհը, այնպես էլ փրկությունը ճաշակած քրիստոնյան պիտի ցանկանա, որ ուրիշներն էլ լուսավորվեն, ճաշակեն աստվածգիտության քաղցրությունը: Նա պետք է աղոթի նրանց համար, ջանա իր օրինակով, բարի գործերով լուսատու կանթեղ լինել՝ մարդկանց դեպի արդարության Արեգակն առաջնորդելու, փրկության ճանապարհին կանգնեցնելու համար: Քրիստոսն ասում է. «Ճրագ վառելով՝ կաթսայի տակ չեն դնում, այլ աշտանակի վրա, եւ նա լույս է տալիս բոլոր նրանց, որ տան մեջ են» (Մատթ. Ե 15):

Մեր ողջ կյանքը՝ ծնունդից մինչեւ մահ, փրկության ճանապարհ պիտի լինի, այսինքն՝ մենք մեր կյանքի ամեն վայրկյանը, յուրաքանչյուր պահը պիտի ապրենք հանուն երկնքի արքայության, մեր կատարած յուրաքանչյուր գործ պիտի հավասարակշռված լինի: Մենք պիտի խորհենք. արդյո՞ք մեր մտածածը, մեր գործածը առաջնորդում է մեզ փրկության, բարի՞ է, Հիսուս Քրիստոսն այդպե՞ս կուզեր, որ մենք անեինք: Եթե ապրենք այս կերպ, ապա երկնքի արքայությունը կհաստատվի մեր մեջ:

***Հյուրընկալեց Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ***


**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
1. 2. 2010 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**